ԱՐԱՐԱՉ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Զ. ՏԱՐԻ ԻԳ. ՅՈՒՆԻՍ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ սրբալոյս Միւռոնի . 299
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ ժողովելը Աւաքելոց ժամանակ (Բերսիէ) . . . 290
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ լուծումն (Շարունակութիւն և վերջ) Ս. Մանդինեան . 310
ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ նկատողութիւնք. (շարունակելի) Ֆայքեբուհի . . 328
ԳԵՐԶԱՅԱԿԱՆ Դասախարները գիտութեան Հայեցակէտից, թարգմ. Բ. Մ. Զարգարեանց 338
ԱԶԳԱՅԻՆ. ԱՆՈՒԱՆՔ Նուիրատուաց յաղագս վերանորոգութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի 350
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՆՆԻ.

1890—ՌՅԼԹ

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ.

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ադրիվանք կամ Գիշերդավանք.	— 10
Աստուածպաշտութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ . .	— 70
Արարատ Ամենափր տարեկան ամրողջ կազմիալ. . .	2 —
Աւետարան Համաբարբառ վկայութիւնամբ . . .	— 80
Բէնիամին Ֆրանկլինի կեանքը	— 20
Գիրք Հանդիսականութեանց կայսերական տօնից . .	— 50
* Գոհութիւն ողբերգութիւն	1 —
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի . . .	3 —
Դաշնագիր	— 10
Դասագիրք բազմատեսակ Աշխարհագրութեան . .	50
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց . .	— 50
Նոյն.—Միջին դարուց	— 50
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ. Արիէլ Եպիսկոպոսի .	— 10
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	— 10
Դպրոց տարեկան 1874—76	2 —
* Եօթն խօսք առ տղայս	— 20
* Թուաբանութիւն զարգացնելոյ Ա. Գալֆայեան . .	1 —
* Ժամագիրք տեառն	8 —
Ժամագիրք ձեռաց	2 —
* Լսարան Ագապ ուրբաթ	— 10
* Լսարան Կ. Պօլսոյ	— 10
* » Արևմ	— 10
* » Զատիկ տեառն	— 10
* » Երկինք և երկնայինք	— 10
* » Հոխիսիմէ	— 10
* » Հնութիւնք Եգիպտոսի	— 10
* » Մեծն Ներսէս	— 10
* » Ս. Խաչ	— 10
* » Տօն Ծննդեան	— 10
* Խանգարմունք Հայկաբանութեան	— 20
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ . . .	— 20
Կանոն աշակերտաց Գէորգեան ճեմարանի . . .	— 5
Կանոն ընկերութեան Հայոց ճաւայի	— 10
Կանոն ծխական Դպրոցաց	— 20
Հանդէս Գ. տարեդարձի Գէորգեան ճեմարանի . .	— 10



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻ Զ. — ՇՐՋԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԳ. ՅՈՒՆԻՍ 30

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՅՍ ՄԻՒՈՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմբ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տիառն Ընտուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԿՐՏԻՉ մնաղրեալ է Ս. Միւռոն օրհնել:

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Էջմուած և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան հնորհը:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ ՅՈՂՈՎԵԼԸ
ԱՌԱՔԵԼՈՑ ԺԱՄԱՆԱԿ.

Ա յլ վասն հաշուին, որ ի սուրբսն է, որպէս պատուէր եառ եկեղեցեացն Գաղատացւոց, նոյնպէս և դուք առնիջիք ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն. իւրաքանչիւր ոք ի ձէնջ անձին իւրում գանձեսցէ որ ինչ և աջողեսցի, զի մի յորժամ գայցեմ, յայնժամ հաշիւք լինիցին, այլ յորժամ եկիցէ, զոր միանգամ ընտրիցէք թղթովք, զնոսա առաքեցից տանիլ զշնորհսն ձեր յԵրուսաղէմ, ապա թէ արժան իցէ և ինձ երթալ, ընդիս երթիցեն: (Առ Կորնթ. ԺԶ. 1—4):

Պաւղոս առաքեալն ունի այնպիսի թղթեր, որոնք պարունակում են իրանց մէջ դաւանական բանք. այս գրուածոց մէջ Պօղոս առաքեալը ապացուցանում է մի հիմնական ճշմարտութիւն, որի շուրջը կարգաւորում է իւր բոլոր մտքերն ու գաղափարները և երկար ժամանակ վերացական գաղափարի վեմութեան վերայ կանգ առնելից յետ իջնում է դէպի գործնական իրաւունքներն, որոնցմով վերջանում են բոլոր նորա թղթերը: Այս թղթերի մէջ զարմանալի են խիստ կանոնաւորութիւնը մտքի և դատողութեանց շարքի հետևողականութիւնը: Իսկ ինչ վերաբերում է Կորնթացւոց թղթերին, սորա ունին այլ առանձին բնորոշ կերպարանք՝ նորա յոյժ կցկտուր են:

Առաքեալն այս թղթերի մէջ խօսում է բազմաեսակ խընդիրների մասին, այնպէս որ նոցա մէջ բուն տեզական դէպքերը միացած են դաւանաբանական դատողութեանց հետ և ընդհանուր խրատները խառն են այն հրահանգների հետ, որոնք մասնաւոր անձանց են վերաբերում: Ըստ երևութին Առաքեալը դժուարութեամբ յաջողեցնում է բաւարարութիւն տալու

քազմազան հարցերին, որոնք տալիս է նրան նորա հօտը և որոնք զարթուցմ են նորա մէջ իւր ջերմ սիրոյ ազդեցութիւնից դէպի այդ հօտը:

Եղբարք, սրանից չպէտք է եզրակացնել, որ այս թղթերն աւելի պակաս նշանաւոր են մեզ համար, ընդհակառակն հէնց այս կողմից բնաւորութիւնը նրանց տալիս է մեծ կշիռ և անհամեմատելի նշանակութիւն: Նոքա մեզ տեղափոխում են առաքելական ժամանակներին, նոքա ցոյց են տալիս այդ գարի քրիստոնէից անհրաժեշտ կենդանի կարեաց և գործողութեանց շրջանը: Նոքա՝ այդ թղթերը, բովանդակում են այնպիսի մանրամասնութիւնք, որոնք, թէև ըստ երևութին աննշանք, կրում են իրանց վերայ պատմական ճշմարտութեան և անվիճելի իսկականութեան կնիք: Փոխանակ այն անհատատատ, պըղտոր և խաւարչտին մթնոլորտի, որոյ մէջ ներկայ անհատատութիւնը կամենում է մեզ տիպել գանելու եկեղեցու վիպական ծագումն—մենք տեսնում ենք այնտեղ հաստատուն հող, հանդիպում ենք այնպիսի իրողութեանց, որպիսիք ապագայում՝ անկարող էր հնարել վկայաթղթերի ոչ մի ճարպիկ կեղծող: Ջանազան տեսակի նշաններով և մանաւանդ կողմնակի զօրեղ փաստերով մենք կարող ենք կատարելապէս ստոյգ կերպով դատել նորա վերայ, թէ ինչ էր քրիստոնէից հաւատն և կեանքը քան և հինգ տարի Յիսուսի Քրիստոսի մահից յետոյ: Սրանից աւելի և—բարեպաշտական խրատան, որ առաջ է գալիս այսպիսի վկայաթղթերից, բովանդակում է իւր մէջ աւելի համոզիչ և ակներև ինչ՝ այն է փոխանակ տեսնելու նորա մէջ լոկ վերացական գաղափարներ, մենք հանդիպում ենք իրողութեանց և տեսնում ենք, թէ ինչպէս մարդիկ գործում և ներգործում են: Սուրբն Պօղոս այստեղ երևում է ոչ թէ, ասենք, իւր պաշտօնական դիրքի մէջ, այլ իւր առօրեայ կեանքով. մենք կարող ենք նրան հանդիպել իւր բարեկամական և մտերիմ արտայայտութիւններից, որոնց քննադատութեամբ պարզուում է շատ անձանց ոչնչութիւնն, որոնք անարժանութեամբ յափշտակել են մեծութեան պսակը: Մի խօսքով այդ գրութիւնք մեզանից են տալիս

մեզ պնդելու թէ քրիստոնէական հաւատոյ սրտիկի ազդեցութիւն էր գործում մարդոց վերայ և թէ դաստելու ծառի մասին սորա պտուղներով։

Ա. յն հարցերից, որոնց մասին հարևանցի կերպով խօսում է Պօղոս առաքեալն, ես ընտրեցի մէկին, որոյ մասին այսօր պիտի խօսեմ ձեզ հետ, եղբայրք։ Ա. յս խնդիրը վերաբերում է նուիրատուութիւնք ժողովելուն յոյն եկեղեցեաց մէջ յօգուտ Երուսաղէմի քրիստոնէից, և ես կցանկայի, այս ըստ երևութին տեղական և մասնաւոր իրողութիւնը պնդելով, դոյց տալ ձեզ, որ նրանից եղրակացրած խրատը վերաբերում է ամէն դասի և ամէն ժամանակի։

Երուսաղէմի եկեղեցին այն ժամանակները ծանր թշուառութեանց ենթարկուած էր։ Շատ հաւանական է, որ բարեգործութեան այն հրաշալի եռանդն, որ լուսաւորեց նորա ծագումն այնպիսի մաքուր լուսով և որոյ արտաքուստ պատմութիւնը պահպանել է մեզ Գործք Առաքելոցն, ոչ ընդհարկար մեղմացրեց թշուառութիւնքն, որոնք բազմանում էին անընդհատ հալածանաց պատճառով։

Առաջ այդ հալածանքները շատ յաճախ էին, միևնոյն ի նոքա հանդէս գոյին յանկարծ իբրև ժողովրդական մոլեռանդութիւն և կամ իբրև մի այլ արագ անցնող յուզմունք, ինչպէս այդ պատահում էր այլ տեղերում, Երուսաղէմում նոքա կազմում էին լուռ և անընդհատաբար գործող դաշնակցութիւն նորադարձ քրիստոնէից դէմ։ Ա. յս վերջիններն, որոնք ազատվում էին ժողովրդականներից և պիղծ էին համարուում, տեռնում էին, որ նոցա առաջ փակում են բոլոր դռներն, որ նոքա ամենուրեք հանդիպում էին անհաւատարմութեան, ատելութեան և նզովքի, որ աշխատում են նրանց զրկել աշխատանքից և մինչև անգամ գոյութեան միջոցներից, տեսնում էին, որ որքան էլ իրանք ազատ էին հեթանոսներից, այնքան աւելի և աւելի ծանր դարձել էին իրանց աղգակիցներին։ Ա. յս հոգևոր բանտարկութիւնն արտայայտուում էր ամէն տեսակ զրկանքներով, այնպէս որ շատերի համար այդ բանտարկութիւն հետևանքն եղաւ

կատարեալ ազգասուրթիւնը։ Բայլ օրանից յայտնի չէ, թէ ար-դեօք առաջին օրերի ընդարձակ բարեգործուրթիւնն երկար ժամանակ ապրեց Երուսաղէմի քրիստոնեայ հաստատակուրեան մէջ. շատ հաւանական է, որ նրան վոխարինած լինի ժլատուրթիւնն ու կծծիուրթիւնն, առ որ հակամէտ է հրէից ազգը (որոյ մասին կարող ենք դատել Յակոբոս առաքելոյ թղթի հիման վրայ) և որ տուած լինի իւր պատուղը։ Յամենայն դէպս մեծ գործոզուրթիւնը տաշնտպի մէջ էին ձգում Երուսաղէմի եկեղեցին, որ և շատ վշտացնում էր առաքը Պաւղոսին։

Այս թշուառ վիճակը պէտք է շատ քրիստոնէից համար գայթակղուրեան առարկայ դառնար։ Մարդս միշտ հակամէտ է նիւթական բարօրուրեան մէջ տեսնելու Աստուծոյ մի տեսակ բարեհաճուրթիւնն, ընդհակառակն տլքատուրթիւնն ու կարիքը թուում են մարդոյ Աստուծոյ անտեսումնածուրեան նշան։ Կրօնն, որ իրան գաւանողներին հասցնում է տլքատուրեան, շատ է կորցնում իւր հրապոյրը յաչս ամբոխի։ Եւ յիրաւի ինչպես հարկ է բացատրել, որ լսա երևուրթիւն, կարծես Աստուած բոլոր թոզի արել էր այն եկեղեցին, որ մայրն էր բոլոր այլ եկեղեցեաց և որոյ վերայ կենդրոնացած էին բոլոր քրիստոնէից յոյսերը։ Կարելի էր արդեօք այն ժամանակ հասկանալ, որ այն հալածանքները նպաստեցին Աստուծոյ գործի յաջողուրեան։ Մենք իսկոյն կհասկանանք, թէ ինչ մնաքով նպատակ էին եկեղեցեաց. բայց առաջ խօսենք այն վճռականուրեան վերայ, որ տիսպուեցաւ ընդհանուր ժողովն Պաւղոս Նոցա առիթիւ։

Առանց չափազանցուրեան կարելի է ասել, որ այն ժամանակ Գողգոթա առաքեալի անուանից աւելի անուն չկար Երուսաղէմում։ Նորա նախկին հաւատակիցներն տատում էին նրան, ինչպէս տասերաքար աւելի են լինում ուրացողները — յայտնի է, որ ամենքն ոչքի տակ քրիստոնէից նախկին հալածիչը դարձաւ Քրիստոսի խոնարհ և ջերմեռանդ աշակերտ և ամենուրեք քարոզում էր, թէ Մովսէսի օրէնքը ջնջուեցաւ և հեթանոսաց առաքեալ դառնալով — որ աւելի ևս յուսահատեցնում էր

հրէաներին—քանզարձակօրէն յայտնում էր, որ Աստուծոյ արքայութիւնը նոցա (հրեաներուս) մէջ պէտք է հաստատուի, Հասկանալի է, որ այսպիսի գաղափարը բնական է և Պաւղոս առաքեալ այլ ինչ չէր ակնկալում. բայց նրան զարմացնում էր և վշտացնում այն հանգամանքն, որ այդ թշնամական զգացմունքը դէպի նա մեծ էր գործել որոշեալ աստիճանով Երուսաղէմի եւ քրիստոնէական հաստարակութեան մէջ։ Հրէաները քրիստոնեայ դառնալով հեշտութեամբ չէին բաժանվում իրանց նախկին սովորութիւններից և մանաւանդ իրանց ազանդութիւններից։ Նոցանից ոմանք, հրապարակաւ դաւանելով Նոր Կտակարանի ընդհանուր հոգևոր հիմունքը տեսականօրէն, գործնականապէս էլի մնում էին սորուկ Մովսէսի հին ուխտի կարգադրութեանց, այլք իրանց մարդկային թուլութեամբ աշխատում էին իրանց հայրենակիցների (հրէաների) յանդիմանութիւնից ազատ մնալ և չէին ուզում նորադարձ հեթանոսներին իրանց հաւասար ճանաչել։ Այսպիսի նախապաշարմունքները չափազանց յամառ էին և զօրեղ, որովհետև մինչև անգամ ինքը Պետրոս առաքեալն ենթարկուեցաւ նոցա ազդեցութեան և անձնատուր եղաւ վտանգաւոր կեղծաւորութեան, երկիւղ կրելով ուտելու նորադարձ հեթանոսների հետ միասին եբրայեցիների առաջ և Պաւղոս ստիպուեցաւ նրան հրապարակաւ յանդիմանելու այդ առթիւ (Առ Գաղատ. Բ. 11—14)։ Եթէ Պետրոսն Անտիոքի պէս քաղաքում, ուր դարձած հեթանոսների թիւը շատ սուաւար էր, այնպէս տատանուեցաւ, որչափ մեծ պէտք է լինէր հրէական գաղափարների և հայեցուածքների ազդեցութիւնը նոյն իսկ Երուսաղէմում, որ էր հին աստուածպետութեան որրանը։ Երուսաղէմի եկեղեցու անդամներից շատերը մնացած էին մի տեսակ իրաւախոհութիւն կայացնել Հին և Նոր Ուխտի մէջ, նոքա մերժում էին հեթանոսների երկից արքայութիւն մտնելու կարելիութիւնն, առանց Մովսէսի օրինադրութեանց ենթարկուելու, նոքա զայրացած էին Պօղոս առաքեալի դէմ և այս զայրոյթն այնքան անդադար աճում էր, որքան ստացուում

էին լուրեր նորա առաքելական յաջողութեանց մասին, այս թշնամութիւնն ոմանց մէջ հասնում էր այն աստիճանի, որ նոքա Պօղոս առաքեալին յեղափոխիչ—ապստամբ էին համարում, որ ատում է իրանց հարց աւանդութիւնքը: Նոքա մինչև անգամ նրան առաքեալ չէին ուզում ճանաչել, նոքա ասում էին, որ նա չէ եղել Քրիստոսի երկրաւոր գործունէութեան երկոտասան իսկական վկաներից մէկը: Նոքա էին հէնց թակարդները սարքում Պաւղոսի դէմ, նորա եաւից գործակատարներ և լրտեսներ ուղարկելով, հէնց նոքա իրանց չարամիտ և խորամանկ յարձակումներով զայրացնում էին նորա մեծ հոգին և արտայայտել էին տալիս երբեմնապէս այն վշտալի ազազակները, որոնք հասած են մեզ սուրբ առաքելոյ թղթոց մէջ: Մենք ճըշդութեամբ չգիտենք, թէ Երուսաղէմի եկեղեցու մէջ այդ թշնամական տրամադրութիւնը մինչև որ աստիճան էր հասած, բայց եթէ կարծենք, որ Մելեաանդ հնահաւատների կողմը կվճռնէին բոլոր երկչոտ և խորամանկ անձինք, և վերջապէս բոլոր նոքա, որոնք Պօղոս առաքեալի գործողութիւնը համարում էին բուռն և ոչ ժամանակայարմար, կարելի է տարակուսել թէ ոչ աւելի բազմութիւ էին Երուսաղէմի եկեղեցու մէջ—մեծ առաքեալի թշնամիք արդեօք, թէ բարեկամք:

Զնայելով սրան, հէնց այս եկեղեցու համար Պաւղոսը հոգաքում է ծանր դժուարութեամբ, մի տեղից միւսն անցնելով, նուիրատուութիւնք նորադարձ հեթանոսներից — մի գործ որ առհասարակ ծանր է, և նորա համար առաւել ևս: Մենք գիտենք իրօք, թէ որքան անշահասէր էր Պօղոս առաքեալն, ինչպէս նա ոչինչ չէր կամենում ընդունել յոյն եկեղեցիներից իւր ապրուստի համար, որպէս զի յանդիմանութեան առիւերն անգամ նորա վերայ չընկնի: Կան բնաւորութիւնք (անձինք), որոնց աւելի են ամեն դրամական շահադիտական հաշիւներ և Պաւղոսի բնաւորութիւնն ամենադիւրագրգիռն էր այս վերաբերութեամբ: Իւր անկախութիւնը պահպանելու համար նա աշխատում էր ապրել իւր անձնական վաստակով ձեռք բերած դրամով, թէև բազմից մատնացոյց էր լինում նորա վե-

բայ թէ առհասարակ եկեղեցիք պէտք է հոգան իրանց երիցանց պիտոյքները։

«Դուք ինքներին գիտէք — ասում էր նա Սիմեոնի քրիստոնէից — դի զպէտան իմ և որոց ընդիան էին պաշտեցին ձեռքս այս (իմ)»։ (Գործ։ Առաք։ Ի. 34)։ Նա այն կարծքին էր հետեւում, որ չպէտք է մարդս պարտաւոր լինի ոչ ոքին և ոչնչին, բայց միայն ճշմարտութեան, բայց այս դէպքում, Երուսաղէմի եկեղեցու վերաբերութեամբ, նա մեղմում է իր քարքը, խոնարհեցնում է իր բնական հպարտութիւնն և շնորհաց ժողովարար, խնդրող և պահանջող է դառնում։ Կարծես նորա հօտի հոգևոր բեռը բաւական ծանր չէր նորա համար — իր առաքելական աշխատանաց մէջ, նա եռանդով անձնատուր է լինում նեղեալների օգնութեան և Երուսաղէմի քրիստոնէից անհաւատարմութեան և թշնամութեան փոխարէն հատուցանում է բարերարութեան սիրագործութեամբ։

Կանգ առնենք մի քանի րոպէ այս անկանջ գործունէութեան առաջ, որ ոչ մի պարտականութեան առաջ տեղի չէ տալիս և զարմանալի միութեամբ կապում է կեանքն ու վարդապետութիւնն, ոտքումնածութեան գործնականութիւնն ու տեսութիւնը։ Ա յստեղ Պօղոս առաքեալը յայտնուում է իսկական աշակերտ Յովսա, որ քաջ ժամ էր մարմինը, վերկելով հոգին, որ նիւթական հոգով յագեցնում էր ժողովրդեան բազմութիւնն, որին հայի հետ տալիս էր միևնոյն ժամանակ և յաւիտենական հոգևոր կերակուրը։ Այս է գործունէութեան երկու կողմն, որ կապել է մեզ Աստուած, այն է կրկնակի նշանակութիւնն որ Նա պատուիրում է մեզ կատարել։ Մարդիկ յաճախ գործունէութեան այս երկու տեսակները բաժանում էին միմեանցից, որովհետև մարդկային անկատարելութիւնը միևչև իսկ քարի գործերում միշտ երևում է այն բանի բաժանելուն մէջ, որ Աստուած միայն դիտէ միացնել։ Յիշեցէք վիջին դարերը։ Ինչպէս վիճիսարի էր այդ դարերի հոգևոր եռանդը։ Որպիսի ջերմութեամբ մարդկութիւնն այդ ժամանակ ձգտում էր դէպի անտեսանելի աշխարհն։ Որպիսի վսեմ արհամարհանք

էր դէպի երկրաւոր գործունէութիւնն, դէպի կեանքի ամեն երկրաւոր բաներ, այն մարդոց մէջ, որոնք ամեն տեսակ զրկուլութեանց մէջ անցնելով իրանց գոյութիւնն և յաճախ պատերազմի և նոքի ապերաճութեանց հնթարկուելով հանգերձ, կանգնուած էին իրանց երկնաձիգ հսկայական տաճարները, մինչդեռ նոցա խորհող անձինք իրանց խոցերի խորքում կազմուած էին վիթխարի ծրագիրներ, որոնց կրօնական միաքն ու բանականութիւնը հանճար էին նոյն ժամ քաղաքականութեան։ Ո՛րքան մեծ և անկատար էր այն ճգնաժամութիւնն իւր բարձր վսեմ ձգտումներով և անչափաւոր արհամարհանքով դէպի բնութիւնը, դէպի նիւթն և առօրեայ կեանքն, որոց մասին ոչ մի գնահատիր չունէր նա։

Ներկայումս վանդը բոլորովին այլ կողմից է սպառնում։ Ամեն ինչ որ վերաբերում է հոգևոր աշխարհին մեր ժամանակիցներից շատերին թուում է բանաստեղծական երազ կամ հասարակ անմտութիւն և Ս. Գրոց լեզուն, որ այնպէս հեշտ հասկանալի էր մեր հայրերին, երևում է նրանց մի խորհրդաւոր անհասկանալի բարբառ։ Նոքա ուշք են դարձնում միայն այն բանի վերայ, ինչ որ կարելի է տեսնել, ինչ որ կարելի է շօշափել և ինչ որ կարելի է համարել։ Կրօնի մէջ նոքա կցանկային պահպանել միայն նորա գործնական և շահաւէտ կողմն, այսինքն այն, ինչ որ նոքա կոչում են բարոյականութիւն, կարծես այս մեծ իրողը կարելի է համեմատական այդ նեղ գաղափարով, կարծես պարտաւոր օրէնքը նշանակութիւն չունի հոգևոր աշխարհի բարձր ոլորտներում և հոգւոյ բարձր երկնային շարժման մէջ։ Նոքա դիմադրութեամբ հնամանում են մեզ հետ, որ Աւետարանը գիտութեան հիմնական դպրոց է։ բայց չեն կամենում որևիցէ աւելի առաջ երթալ և անտարակոյս մենք նրանց կհաճոյանայինք, եթէ համաձայնէինք սահմանափակելու Աւետարանը լոկ մարգասիրական վարդապետութեամբ և եկեղեցին միայն ընդարձակ բարեգործական ընկերութիւն համարելիք։

Այսպէս է մարդկութեան ընթացքն իւր անընդհատ չափա-

զանց շեղմունքներով, իւր կանոնաւոր մակընթացութեամբք և տեղատուութեամբք։ Բայց ամեն ժամանակ և ամեն դէպքում ու բերմունքների միջոցին մեր պարտքը կլինի քարոզել Յիսուսի Քրիստոսի Աւետարանն, որ քարոզեց սուրբն Պաւղոս, այն Աւետարանն, որ միևնոյն ժամանակ եւ ճշմարտութիւն է եւ կեանք, ազատութիւն և իշխանութիւն է, որ փրկում է թէ հոգին և թէ մարմինը, տեղի չէ տալիս ոչ մի թշուառութեան առաջ, լինի սա հոգևոր թէ նիւթական, ոչինչ Աստուծոյ ապարաճներից չէ նզովում և ձգտում է ամեն ինչ բարձրացնել և արբագործել ի փառս Նորա։ Միակողմանի ճգնաւորութեան առաջ պէտք է պնդել թէ «Աստուածապաշտութիւնն զաւետիս կենաց ունի՝ զարդիս և զհանդերձելոյն» (Առ Տիմոթ. Դ. 8), իսկ նիւթապաշտութեան արհամարհանաց պէտք է յուշ ածել թէ «ոչ հացիւ միայն կեցցէ մարդ (Մատթ. Դ. 4)։ Պէտք է Պօղոս առաքելոյ նման երկու բարիք մտցնել աշխարհ՝ հոգևոր բարիք և ժամանակաւոր նիւթական բարիք, յիշելով որ սոքա երկուսը մի են, որ անմոռութիւն է և վնասակար բաժանել այն, ինչ որ Աստուած միացրել է։ Միաժամանակ կանգնենք ուրեմն եւ եկեղեցիք եւ հիւանդանոցներ եւ ապաստանարաններ, կանգնենք դպրոցներ և սեղաններ, մարտնչենք տգիտութեան դէմ եւ աղքատութեան, որպէս մեղքի դէմ, փրկելով հոգիքը պատերազմ յայտնենք ամեն տեսակ սորկութեան դէմ— ես խօսում եմ ոչ միայն այն սորկութեան մասին, ինչպիսի է զորօրինակ Սևերի սորկութիւնն, որ ճնշուած է ներկայ քաղաքակրթութիւնից—ես խօսում եմ սորկութեան այն տեսակների վերայ, որոնք ծանրացած են կանանց և երեխանց վերայ, և որոնց անունն է օրինաւոր համարուած չէզխութիւն և վնասակար խառնակութիւն սեռից մեր զարծարանների մէջ։ Ի՞նչ օգուտ, որ եկեղեցին ապիտակ զգեստ է հագցնում հաղորդութեան սուրբ խորհրդին մերձեցող աղջկանց, բայց չէ նպաստում նոցա հոգևոր մաքրութեան։ Ի՞նչ օգուտ նրանից, որ մի քրիստոնեայ ազգ որևէ ժողովրդեան տալիս է աջ ձեռքով աւետարան, իսկ ձախով—օղի և ափիոն։ Ի՞նչ օգուտ բարոյա-

կան վերածնուԹիւն և ընտանեկան սրբուԹիւն քարոզելից այն անձանց, որոնց մենք դրել էինք նիւԹական սորուԹեան այն ասպիճանի վերայ, որ բանի կերպով նրանց առաջնորդում է դէպի չարիք։ Միւս կողմից ո՞նչ օգուտ կարող են բերել այն միլիոններն, որոնք մենք գլուխ ենք աղքատուԹեան կոկորդն, եԹէ մենք դորա հետ միասին չենք բարձրացնիլ այդ ամբոխի բարոյական արժանաւորուԹիւնն ու բնաւորուԹեան ոյժերը, լուսաւորելով, սրբելով, փրկելով հոգիքն և ուղղանելով իւրաքանչիւրին, որ Աստուածանից յետոյ նա ինքը պէտք է լինի իւր փրկուԹեան առաջին պատճառը։ Ձեռնամուխ լինենք գործին և որպէս զի Աստուծոյ մեզ տուած այս կրկնակի խնդիրը կատարել կարողանանք, մնդրենք նրանից աներկիւղ եռանդ և անխոնջ տոկունուԹիւն։

Պաւղոս առաքեալի մեծ օրինակից առաջ է գալիս և մի այլ խրատ։ Արագ քայլերով մօտենում ենք այն ժամանակին, երբ եկեղեցին տիրապետած պիտի լինի իւր զաւակներից ոչ միայն իւր կարօտեալ թշուառ անդամոց համար օգնուԹիւն հնդրելու, այլ և իւր սեպհական գոյուԹեան համար միջոցներ հայցելու։ Նպատակն, որ նրան տալիս էին երկրաւոր իշխանուԹիւնք, տակաւ առ տակաւ խլուում է նրանից։ ԱրԹուն և մեծ մասամբ թշնամի օրէնսդրուԹիւնը *) կխլէ նրանից յարատև հասարակական հաստատուԹիւնք ունենալու իրաւունքն և կթողնէ նրան միայն, ինչ որ չէ կարող խլել, առանց յանցանք գործելու, այն է տաճարներ ունենալու և իւր օրական պարէնը վաստակելու իրաւունքն։ Ես այն մարգկերանցից չեմ, որոնց երկիւղ է ազդում այսպիսի ապագան. սրանից չպէտք է եղրակացնել, որ ես թեԹևամտուԹեամբ վերաբերուում եմ դէպի հոգեկան ուժահատուԹիւնն և յուզմունքն, որոնք կառԹէ այս ճգնաժամը իրան ժամանակակից սերնդին — բայց ես կարծում եմ, որ վիշտերն առաւելուԹեամբ կվարձատրուին։ Ես կարծում եմ, որ եկեղեցին, զրկուելով իւր իրաւունքներից և արտօնու-

(*) Ակնարկը Ֆրանսիայի մասին է։

թիւններէն, հարիւրապատիկ կվարձատրուի իւր անդամոյ սիրոյ և անձնուիրութեամբ նորա վսխարէն, ինչ որ նրանից կըխլեն մարդկային կարգադրութիւնք. ես կարծում եմ, այս պրկանքները նրան այնպիսի ոյժ կտան, որպ մասին չէր էլ երազում: Ես կարծում նոյնպէս, որ քրիստոնեայք, ամեն կողմից ի պատերազմ հրաւիրուելով իրանց գաւանութեանց համար, գալոս կգան այն թանձրագոյն կրօնական անտարբերութիւնից, որ հաւատն իջեցնում է մի կրաւորական զգայմունքի, մի բարոյական թմրութեան տապիճանի վերայ և անհատի մէջ ապանում է իւր պատասխանատուութեան գիտակցութիւնը: Ես հաւատացած եմ, որ այս համոզմունքներն այնքան աւելի լաւատես և յօրեղ կլինին, որքան նորա թանդ կնատեն քրիստոնէից, այնպէս որ նորա աւելի հաւատալով, աւելի լաւ էլ կհաւատան: Ահա ինչու համար են անոյշ, որ ապագան ինձ չէ վախեցնում: Յամենայն դէպս անձնատուր չլինինք ցնորքներին՝ մինք կարող կլինենք դրան պիմագրել միայն անընդհատ ջանքերութեանց, վշտերի և ամենատեսակ զրկանաց գնով: Ծագէ մենք յափշտակուում էինք այն պատկերով, որով նկարագրուում էր եկեղեցին — հոգւով աղքատութեան կերպարանքով, որով նա՝ եկեղեցին նուաճում է աշխարհս, հեռանալով իւր ադրատպետի քայլերին նորա առնուածային ազքատութեան մէջ: Այս — Ֆրդրիս գաղափար է: քայց եթէ նրան վսխագրենք առօրեայ լեզուով, նա կորցնում է իւր կախարդող ազդեցութիւնն, որ յափշտակում է մարդուս երևակայութիւնն և ահա հարկաւոր է լինում հաշիւ տեսնելու խիստ, ալմկալից և անշուք իրականութեան հետ, անխոնջ թիւերի և քնական եռանդութեան հետ: Շատ քիչ գրաւիչ է ազորմութիւն տալն ոչ համոզմամբ, այլ ըստ պարտականութեան և ըստ հրամանի: Աւելի և պիտոյ է խնդրել մինչև անգամ եղբայրներից այն, ինչ որ նոյնս պարտականութիւնն է: Այս տեղ հարկ կլինի տանել ծանր տանջանաց, շատ գաւան գիւտեր անել և յաղթել իսկական վտանգութեանց: Դէպք է տատանչին շնորհք ստանալ ի վերուստ որպէսզի գաղափարի՝ առաքեալ

դառնայ մարդ, առանց նորա փաստաբանը դառնալու և առանց տատանուելու դառն ճշմարտութեան առաջ, որպէս զի նուաճէ հոգին առանց չարչրարթուելութեան, որպէս զի ծառայ դառնայ, առանց իւր անկախութիւնը կորցնելու, որպէս զի ողորմած լինի դէպի մերժեալները, որպէս զի կարողանայ ճնշել ինքնասիրութեան մահացուցիչ ոգին, մնալով հեզ, բայց պահպանելով և իւր անձնական արժանաւոր զգացմունքը: Հէնց սրանում, եղբարք, ուսուցն Պօղոս կարող է մեզ օրինակ դառնալ: Կարգացէք այն էջերն, ուր նա պաշտպանում է Երուսաղէմի եկեղեցու կարօտեալ քրիստոնէից գործը Կորնթացւոց առաջ և մտածեցէք թէ որպիսի փոփոխութիւն պէտք է կատարուէր Տարսոնացի Սաւղոսի մէջ, որպէս զի այս հաստատամիտ, խիստ և ոտկոն մարդու մէջ երևէր վայելուչ նրբութիւն, որպէս զի այդ խստասիրտ հալածչի շրթունքներով արտայայտուէր այնպիսի համակիր և սրտմիտ ճառ, որ իւր բոլոր ճարտարութեամբ հանդերձ է ևս ազնիւ ու ճշմարիտ:

Այժմ ուշք դարձնենք բուն գործի վերայ, որ կատարեց Պօղոս առաքեալը: Մանրամասնօրէն նրան պնդելիս անհնարին է չզարմանալ նրանից ծագած բարի հետևանքների վերայ:

Ես բնաւ չափազանցութիւն արած չեմ լինիլ, եղբայրք, եթէ ասեմ, որ Յոյների մէջ յօգուտ Երուսաղէմի քրիստոնէից արած ժողովարարութիւնը մարդկութեան բարոյական պատմութեան մէջ նոր շրջան է կազմում: Աշխարհս մինչև այժմ այսպիսի բան աներած չէր: Յաճախ պատահում էր, որ երբեմնիք առատաձեռնութեամբ օգնում էին իրանց հայրենակիցներին, որ Յովսէփոս պատմագիրը արդարութեամբ գովում է: Արդէն աշխարհիս ամեն կողմերը՝ Ասիայում, Մակեդոնիայում, Յունաստանում, Իտալիայում, Ալեքսիկէում ցրուած հրէաները՝ ողբաց թէ հարուստ, վառուած բարեպաշտութեամբ թէև թուլացած հաւատի մէջ հեթանոսական գաղափարներով էլի յիշում էին իրանց ուսուցն ու տաճարը: Նոցանից մինչև անգամ յուդինը գանձում էր իւր նուէրը Երուսաղէմի սրբութեանց և աղքատների համար: Հետևաբար

Հայրենիքի յիշատակը նոցա սրտերի խորքում կենդանի էր, նոցա ամենաջերմ ցնորքն էր վերադառնալ այնտեղ: «Եթէ ես քեզ մոռանամ, Երուսաղէմ, — ասում էին գերի հրեաներն Եփրատի ափերում —, թող իմ աջ ձեռս ինձ մոռանայ, «թող լեզուս կոկորդիս կպչի եթէ ես քեզ չյիշեմ»: Այսպէս էր բոլոր ցրուած երբայեցւոց ուխտը:

Բայց ինչ որ երբէք տեսնուած չէր և որ բնական ճանապարհով կարծես կատարուել էլ չէր կարող, այս այն էր, որ բաբելամական սիրոյ և քնքոյշ համակրութեան կապերը կարողացին կապել հրեաներին այլ ազգերի հետ:

Նոցա և հին աշխարհի քակաքակրթուած ազգերի մէջ գոյութիւն ունէր միայն փոխադարձ ատելութիւն և արհամարհանք: Այս մասին համոզուելու համար բաւական է միայն կարդալ Հռովմայեցւոց կատակերգու մատենագիրներին: Նոցա համար երբայեցիք օտար ցեղ էին, որոնց բնախօսական գծագրութիւնը ներկայացնում էին ծաղրական ձևով: Արևմուտքում հրեաներն երբէք չեն վայելել այնպիսի համակրութիւն և առանձին ուշադրութիւն ինչպէս արևելքում. ուր երբեմն բարձր պաշտօններ էին նրանց յանձնում պետութեան մէջ: Հռովմայեցիք, կարծես, առանձին զզուանք էին կրում դէպի նրանց, իսկ երբայեցիք պատասխանում էին բնազդական ատելութեամբ, որ Հռովմայեցւոց լծի տակ դարձաւ յուսահատած զչարութիւն: Երուսաղէմի պաշարումից յետոյ յաճախ երևան էր գալիս մի լեգին կատաղութիւնն, որ մարմնացած էր այդ երկու ազգերի մէջ: Հռովմն երբէք այդպիսի դիմադրութեան հանդիպած չէր. Տիտոս զարմացել էր դարա վերայ: Մի օրում ի խաչ հանուեցան հինգ հարիւր Հրեայք, այնպէս որ, Յովսեփոսի խօսքերով, խաչեր շինելու համար փայտ էր պակասում: Յոյներն, որոնք Հռովմայեցւոց չափ խիստ և մոլի չէին, նոյն հակակրութիւնն ունէին գէպի Հրեաները, բայց միայն այդ հակակրութիւնը համաձայն նոցա բնաւորութեան արտայայտուում էր գլխաւորապէս ծաղրածութեանց մէջ:

Այսպէս դուք կարողանում էք արդեօք հասկանալ թէ ինչպի-

սի օտարոտի իրողութիւն է այն, որ Յոյներն ու Հռովմայեցիք այնքան հետաքրքրուած են եբրայեցի ազգաններուն վիճակով, որ յանձն են առնուած ու նուիրաբերութիւնք անել նրանց օգնելու համար։ Ու այսպէս վարուող մարդիկ պղատոնական ու ստոյիկեան փիլիսոփաներուն աշակերտները չեն, որոնց ճեմարաններում խորհրդածուած էին մարդասիրութեան մասին։ Բայց նախ ու առաջ այդ խորհրդածութիւնքն ոչոքի սրտի վերայ չէին ազդում, այնպէս որ Հռովմայեցւոց ազգն, որ Քրիստոսի ծննդից երկու հարիւր տարի առաջ ծաւիահարուած էր Տերէնտիոսի յայտնի մեծահոգի ոստանաւորներին, էլի անտարբերութեամբ ու անզգայութեամբ նայում էր ամֆիթեատրոնի կրկէսում կատարուող արիւնհեղութեանց վերայ ու երկրորդ Պօղոս առաքելոյ աշակերտներն ըստ մեծի մասին ստորին դասակարգի մարդիկ էին, որոնք մինչև անգամ այն ժամանակուան փիլիսոփաների անուններն էլ չգիտէին (Առ. Կորնթ. Ա. 26)։

Ու հէնց այս ստորակարգ, տգէտ աղքատների ու ըստրուկների մէջ, այս աշխարհիս փոքրների մէջ յանկարծ ծնաւ ու զարգացաւ նոր առաքինութիւն, որոյ անունն եղբայրութիւն է։ Հաղարաւոր վերստեր հեռուում նոքա մնաձում են աղքատութիւնից տանջուող եբրայեցիների վերայ, կարեկցում են թշուառութեան, յաղթում են իրանց նախապաշարմանց ու իրանց համակրութիւնը յայտնում են ոչ միայն տեսականաբար — խօսքով, այլ ու գործնականապէս — նուիրատուութեամբ։ Ինչ բան էր այն, որ այսպիսի բարոյական յեղափոխութիւն առաջ բերեց։ Գուցէ մի որ ու է վերացական վարդապետութիւն էր կամ նոր մարդասիրական մի փիլիսոփայութիւն։ Եթէ մինչև անգամ ընդունելու լինենք, թէ նորադարձները կարող էին ըմբռնել վերացական վարդապետութիւն, սա չէր կարող նոցա վերայ այնպիսի ազդեցութիւն գործել, որ մինչև այդ աստիճան յեղափոխէր նոցա բնութիւնը։ Այսեղ գործը բոլորովին այլապէս էր, խորին զգացմունք տիրեց նոցա սրտերին, նոցա մէջ թափանցեց սէրն առ Աստուած, որ քարոզեց Յիսուս Քրիստոս ու նորոգեց նոցա բոլոր կեանքը, նոցա բոլոր զգացմունքները։

Ա՛յս սիրոյ լուսով լուսաւորուած այսօրհետև կեցայեն նոքա մարդոց վերայ և նոցա մէջ, որոնք մինչև ցայժմ նրանց օտար էին և բարբարոս երևնում, նոքա տեսնում են անմահ հոգիք, որոնք Աստուծմէ ստեղծուած են ի վայելս իւր և փրկուած են Փրկչի մահուամբ խաչի վերայ: Աստուծոյ հայրական սէրը ստիպեց նրանց հասկանալ մարդկային եղբայրութիւնն և եթէ նոքա մարդկութեան միութեան մեծ գաղափարը սկսում են ճանաչել իբրև ցանկալի իրականութիւն, այդ նրանիցն է, որ նոքա երկնքում մի Աստուծոյ են երկրպագում և ամենեցուն Հօրն, «որ ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ». (Եփես. Դ. 6): Յիրաւի, սորա մէջ է ճշմարիտ կրօնի նշանն՝ որ մարդուն Աստուծոյ հետ կապելով, կապում է մարդուն մարդու հետ էլ: Ինչպէս որ մագնիսն ոչ միայն քաշում է երկաթի խարտոցուքը այլ և հաղորդում է նրանց զօրութիւն դէպի իրանց ձգելու մերձակայ մանրիկներն, այնպէս և սէրն, որ աւաջնորդում է մեզ առ Աստուած, իսկոյն վերականգնում է կապը հոգիների մէջ, որոնք ենթարկուած են նորա ազդեցութեան: Ա՛յսպիսի համեմատութեամբ կարելի է արտայայտել սիրոյ կրկնակի օրէնքն՝ որ ամենայն գոյութեանց բարձրագոյն օրէնքն է:

Ահա, եղբայրք, այս է Աւետարանի մեզ տուած շահն, ահա այս է նորա ամենամեծ արժանաւորութիւններից մէկը: Եթէ նա ոչխարհիս վերայ ուրիշ ոչինչ էլ բերած չլիներ, միայն սորա համար հարկաւոր էր նրան տուրը համարել: Աւելորդ համարձակ չենք այս, թողլ չանենք, որ մարդկային փիլիսոփայութիւնն իրան յատկացնէ այն, ինչ որ իբրև Աստուծոյ գործ է յայտնուում: Ապահով և հաստատ լինենք, որ եթէ աւետարանը հիմնեց այն սուրբ հաստատութիւնն, որ կոչուում է հանրամարդկային գերդաստան, նա ինքը միայն ընդունակ է պահպանելու նրան և յաղթութիւն տալու նորա գաղափարին: Եթէ մեկը կերկչեայի այս մասին, այդպիսին պէտք է ուշք դարձնէ այն նոր ընկերվարական (սոցիալ) տեսութեանց վերայ, որոնք երևում են աշխարհումս միշտ այն ժամանակ, երբ մարդոց մէջ

նուազում ու թուլանում է քրիստոնէական հաւատը։ Անամօթ արհամարհանքը դէպի սուրբ ցեղերը, գոյութեան համար պատերազմն, որ կենդանական թագաւորութիւնից վոխադրած է մարդկային գործունէութեան շրջանը, յաջողութեան և բռնութեան սուրբ արտարացումն—ահա սրբա շուռով ընդհանուր օրէնսդրութեան հիմն կդառնային, եթէ մարդիկ մոռանային, թէ իրանք կենդանի Աստուծոյ արարածներ են և թէ իւրաքանչիւրի հոգին արժանի է փրկութեան փրկարար ուրեմքն։ Ինչպէս որ գիշատիչ գազանները դուրս են գալիս իրանց որջից, հէնց որ արեգակը իջնում է հորիզոնի եռև, նոյնպէս էլ բռնութեան և յափշտակութեան այն վարդապետութիւնքը հանդէս են գալիս մարդոց մէջ, հէնց որ քրիստոնէութեան արեգակը ծածկուում է թանձր ամպով։ Բողոքը չի ջնջիլ այդ վայրենի վարդապետութիւններն—այս տեղ հարկ է մարտնչիլ մոլորութեան դէմ միայն ճշմարտութեան զէնքով. իսկ ամենալաւ միջոցը ճշմարտութեան տարածման է նորա մարմնացումն կեանքի մէջ։ Եթէ մենք իրօք աշխատենք յօգնութիւն հասնելու հեռաւոր և մերձաւոր թշուառներին, եթէ այս նպատակի համար միանան հարուստներն ու աղքատներն, եթէ մինչև անգամ մեր բանուորներն ու երեխայք էլ այս գործին նուիրեն իրանց թոյլ ուժերն և եթէ այս նուիրուած կոպեկներով ծովերի միջա ափսամ մի տեղ, թեկուզ Ափրիկէի մի անկիւնում որ և է քարոզչական ապաստանարան կառուցանուի կամ մի դպրոց, այս հեղ ջանքերը հանրամարդկային եղբայրութեան համար աւելի ընդարձակ տոպրէզ կբռնան և նորա համար աւելի լաւ ապագայ կպատրաստեն, քան թէ բոլոր մարդասիրական աեսութիւնքն, որոնցմով շատ հարուստ է և ներկայ դարս։

Բայց դառնանք մեր քնարանին։ Սա ցոյց է տալիս մեզ աշխարհուժն նորս, հիանալի առաքինութեան յայտնութիւնը։ Հիանանք, եղբարք, և զարմանանք, թէ ինչպէս Աստուած գիտէ կարիքից բարիք առաջացնել և ամեն ինչ իւր կամոց ենթարկել։ Ո՞ւր է երկրիս երեսին հիմնուած եղբայրութեան պատ-

ճառը: Այդ պատճառը Երուսաղէմի քրիստոնէից թշուառութեանց մէջ է, որոնք իրանք էլ ծագեցան Հալածանքներից: Նոցա արիւնոտ ակօսներում հաստատուած առատ հունձ, փշի և տատասկի վերայ ջրալից պտուղներ գոյացան: Այս տեղ կարելի է յիշել Պօղոս առաքելոյ թէև այլ առթիւ գրածը Հռոմայեցւոյ թղթոյն մէջ, թէ. Հրէից ապքաստութիւնը Հեթանոսաց հարստութիւն է: Եւ յիրաւի որպիսի բարերար հարստութիւն բոլոր մարդկութեան —նոյնպէս անհնարին է թուել Հալածանաց բոլոր բարի հետևանքներն, այն Հալածանաց, որոնց ենթարկուեցան այն ժամանակ Երուսաղէմի քրիստոնեայք: Ուրեմն եկէք կրկին անգամ այս տեղ ծունր դնենք այն Աստուածային իմաստութեան առաջ, որ արտասուքից բարիք է առնչ բերում, պարտութիւնը յաղթութեան է փոխում, որ մարտիրոսաց արիւնով ոռոգում է երկիրն, սէր պիտի աճի ապագայ սերմն, որ աքսորեալներին Հալածուող ճշմարտութեան քարոզիչ է դարձնում և կազմում է քրիստոնեայ ազգեր, միացնելով նոր աշխարհը հին վախճանականների հետ և որ վերջապէս յայտնում է մեզ ազգերի եղբայրութեան հիանալի տեսարանն այն տեղ, ուր երեմն թագաւորում էր անհաշտ, մահեանգ տգանդաւորութիւն, այնպէս ինչպէս և նա՝ իմաստութիւնը յայտնեց մեզ Սէրն իր պայծառ վայլով խաչի վերայ, որ կանգնել էր ամենակատարի տեղումբիւնն: Ի նկատի ունեցէք — Երուսաղէմի քրիստոնեայք մոքով իսկ չէին անցնում այս, նոցանից ոչ ոք չէր էլ մտածում, որ իւրեանց փորձանաց մէջ կայ գաղտնի նպատակ: Մինչև իսկ կարելի է ենթադրել, ինչպէս սկզբում ասացին, որ նոցա թշուառութիւնը նոցա համար լի էին գայթակղութեամբ և հոգևոր վտանգներով: Տեսնել, որ եկեղեցին յաղթահարուած է

այնտեղ, ուր նա հիմնուեցաւ, մնաձեղ նորա մասին, թէ Աստուած չէ հոգում նորա վերայ, վկայ լինել վշտերի, որոնք ծնունդ էին աղքատութեան այն հօտին, որ ապարէզ էր այնպիսի ողորմածութեան, որ, կարծես, պէտք է ջնջած լինէր նոյն իսկ կոչնեալ խօսքը (Դտրն. 7. 31) — այս ամենի մէջ թագնուած էին այնպիսի տարակսութիւնք, որոնք բաւական էին ամենահաստատուն հաւատն անգամ խախտելու: Մ՚ինչ կարելի էր ենթադրել որ վշտերի գպրոնիքի եւս թագնուած է սիրոյ գաղտնիքը: Անտարակոյս շատերն չգիտէին այս և Աստուծոյ ճանապարհները մնում էին նոցա համար անհասանելի: Բայց երբէ նոքա կարողանային, չնայելով հեռատեսութեան, տեսնել թէ ինչպէս նախկին մոլի հեթանոսներն աշխատում էին նոցա համար և ուրախութեամբ ընդունում են անում — ո՛հ որպիսի կենդանի լոյս կլուսաւորէր նոցա խաւարը, որպիսի բերկրութեամբ կօրհնէին նոքա այս նոր անճառանօթ եղբայրներին:

Մեծ խրատ առնունք այստեղից. այստեղ երկրիս վերայ մենք երբէք չենք կարող կատարեալապէս գուշակել վշտի գաղտնիքըն և գիտենալ թէ նորա մէջ որքան բարի հեռանքներ են բովանդակուած: Կայ կարծիք, թէ նրան կարելի է բացատրել բաւարար եղանակով, տեսնելով նորա մէջ պատժոց և սրբագործոց նախախնամութեան գործողութիւնն. անտարակոյս այս մինն է այնն շանաւոր պատճառներից, որով Աստուած ուղարկում է մեզ վշտեր: Ինքը Տէրը ասում է այս. «Նա խրատէ զմեզ՝ վասն օգտի, առի ընդունելոյ զսրբութիւն Նորա» (եբրայեց. ժԲ. 10): Այսպիսի բացատրութիւնը տալիս է մեծ յոյս, որ միայնակ բաւական է մեր տրտունջը դադարեցնելու և ստիպելու մեզ, որ խոնարհենք այնպիսի բարի և հզօր կամքի առաջ: Բայց վիշտը մի այլ աւելի մեծ բան պարունակում է իր մէջ: Եթէ Քրիստոս՝ գլուխն եկեղեցւոյ, որ նորա մարմինն է, չարչարուեցաւ բոլոր մարմնոյ համար, զոհելով իրան նորա համար, չէ կարելի, որ նորա որ և է թէ կուզ աննշան անդամի չարչարանքներն աղդէին միայն վերջինի վերայ: Նա մարմնոյ մասն է և այս բաւա-

կան է, որ բոլոր նորա հետապատահածը կապ ունենայ բոլոր անդամների հետ: Նա ինքն այս մասին ոչինչ չգիտէ. բայց ի՞նչ կարիք կայ գիտենալու: Եթէ գիտութիւնը հաստատում է, որ բնական աշխարհումն ոչինչ, ոչ մի հիւլէ, ոչ մի շարժումն չէ կարող առանց հետեւանքի անցնել, մենք մի րոպէ անգամ չենք կարող երկբայել, որ բարոյական աշխարհումն էլ այլապէս կարող է լինել: Արդեօք այստեղ չէ՞ գտանում բացատրութեան բանալին այն անսովոր բացառական թշուառութեանց համար, որոնք Աստուած երբեմն ուղարկում է իր ամենից ընտիր և անարատ արարածներին: Մանաւանդ անձանց վիճակի հետ կապուած այս թշուառութիւնքը զննելով դուք ի դուր աշխատ կլինիք թափանցելու նոցա իմաստն. իսկ վերաբերութեամբ բուն մեղքի նորա ստոնում են կատարելապէս պարզ նշանակութիւն: Այն ժամանակ այս կամ այն անձնաւորութեան տգդեցութիւնն, որպ կեանքը գրեթէ բոլորովին ճնշուած է թշուառութեանց և չարաբաստութեան լծի տակ, մեծ ընդարձակութիւն է ստանում և ներգործում է զարհուրելի հեռաւորութեանց վերայ էլ: Բայց ի՞նչ եմ ասում — մի՛թէ տարածութիւնն որ և է նշանակութիւն կարող է ունենալ Աստուծոյ համար, մի՛թէ մի Աքայեցի այրուց ծանր աշխատանքը չօգնեց Երուսաղէմացի այրուցն իր զաւակին կերակրելու: Որպիսի՛ հիանալի և սրտառուչ գաղտնիք է, հազար անգամ աւելի հիանալի, քան էլեքտրականութիւնն, որ մի ացնում է աշխարհիս հակադիր ծայրերը: Այսուհետ կորընթացի մի հիւղում միակ լապտերը լոյս է տալիս պարզասիրտ կնոջ, որ իր լղար մատներով գործում է իր անկուածն, որ նա ծախում է, որպէս զի նրանից վաստակածը ներկայացնէ և յանձնէ որբոց մերձակայ ժողովին: Իսկ այնտեղ երբայական խրճթի առաստաղի տակ իսրայէլի գուսանը արտասուքն աչքերում գոհութիւն է մատուցանում Աստուծոյ իր ժպտող մանկան առաջին: Այս երկու քրիստոնեայ կանայք երբէք միմեանց չեն հանդիպել երկրիս երեսին, այն ինչ մէկը նրանցից ազատեց միւսին և յաւիտենական կապը կմիացնէ նրանց Աստուծոյ արքայութիւնում:

Այսպէս մի խաբուիք. մեր առաքինական գործերն ու նախատեսած զոհերը չեն միայն որ մեծ նշանակութիւն կարող են ունենալ։ Վիշտն էլ, որ մեզ անօգուտ և անպտուղ է թուում, ունի իւր նպատակն և այդ նպատակն Աստուծոյ է գիտելի։ Անելիք այելի է միայն մի բան, այն է որ նա անհետևանք անցնէր—այսպիսի հնթադրութիւնը զրպարտութիւն կլինէր Աստուծոյ իմաստութեան դէմ և նորա ներգործող կամքի ուրացումն։ Սերմերն, որոնք գիւղացին աշնանը յանձնում է գետնին, այնպէս հաղիւ են կորչում, որ կատարեալ անպտղաբերութիւն, գուցէ, պատահի միանգամ մարդկային ամբողջ սերընդի կեանքում։ Այս ամենքին յայտնի է և մինչև անգամ անաստուածներն այս հաշուի են առնում։ Այսպիսի դէպքում մխիթ կարելի է, որ վշտի ակօսներում սերմանած սերմերը հաւատոյ, սիրոյ և անձնուիրութեան մնան անպտուղ։ Եթէ մինչև անգամ հողմը նրանց ջրող ամպերը քշէ, հեռացնէ, մխիթ կարող են նոքա ոչընչանալ բոլորովին։ Աստուած մի ապրեցէ որ հաւատանք սրան, նոքա էլի կգտնեն իրանց համար արմատ գցելու հող երկրիս որևէ անկիւնում։ Տիրոջ մշակած մեծ դաշտում չկայ ոչ մի փոքրիկ կտոր բոլորովին անպտղաբեր երկիր։ Ականջ դրէք . . . . ժամանակն երեկոյանում է. օրուայ լոյսը նուազեց, վաստակը վերջանալու վրայ է և երեկոյեան անուշահոտ օդում երկնքի տակ, որ լուսաւորուած է չհանգչող վհայլով, լսւում է բանուորների ուրախ երգն, բանուորների, որոնք տուն են վերադառնում արքայան աշխատանքից յետոյ . . . «Ոյք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեցեն։ Երթալով երթային և լային, այք բարձեալ տաղէին զսերմանիս իւրեանց, գալով եկեսցեն և ցնծասցեն, այք առեալ բերիցեն զսրտայս իւրեանց» (Սաղմ. ՃԻԵ)։ Ձի ի Տեառնէ եղիցի գարձ և եկեսցեն ի Սիոն ցնծութեամբ և ուրախութեամբ յաւիտենից, զի ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ուրախութիւն հասցէ նոցա, մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք »։ (Եսայի. ԾԱ. 11)։

(Բեզուէ)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ·

(Շարս–նախ–ըն–ն և վերջ)·

Երկրորդ նախադասութիւն.

Երբ այդպէս իւր նախկին պայծառութիւնը ստացաւ, ճընճղուկները կրկին եկան իրանց հին բոյները փնտռելու:

Ա՛յս տեղ երկու դիմաւոր բայ կայ՝ «պարս» և «եկն»: Դոքա արգելք համասեռ կամ նոյնատեսակ նախադասութիւններին են պատկանում: Ո՛չ «պարս» երկրորդական նախադասութեան անդամն է, իսկ «եկն՝ գլխաւորի անդամ: Մեծ մասով, ինչպէս և մեր օրինակն է, երկրորդական նախադասութեան բայն՝ վերջին ծայրին է դրվում, իսկ գլխաւորի բայն՝ իւր ենթակայի կից: Եթէ մեր գլխաւոր նախադասութիւնից ուղենանք երկրորդական նախադասութիւն կազմել, այն ժամանակ բայն (եկան) տեղից կը շարժուի և ծայրը կերթայ. «երբ ճնճղուկները իրանց հին բոյները փընտռելու կրկին եկան»:

Մենք ուրեմն լուծումը պէտք է սկսենք «եկան» բայից, որովհետև դա է ամբողջ բարդ-նախադասութեան նշանաւոր բառը:

Ո՞վ եկաւ: Ո՞րոնք էին եկողները: ճնճղուկները (ենթակայ): Ե՞րբ (ի՞նչպէս) եկան ճնճղուկները: Նոքա եկան կրկին, ոչ առաջին անգամ: Ոմանք «կրին գալը» իբրև մի բառ են համարում:

Ի՞նչ բանի համար (ինչո՞ւ) եկան ճնճղուկները կրկին: Իրանց հին բոյները փնտռելու: Ա՛յս է անորևոյթի տրական հոլով (փնտռել, փնտռելու): Շարժա՜ր նշանակող բայերից յետոյ (եկան)՝ անորևոյթը (փնտռել) տրական հոլովով է դրվում (փնտռելու) և ցոյց է տալիս գործողութեան նպատակը: Ա՛յսպիսի դէպքերում աւելորդ է անորևոյթի վերայ համար նախադրութիւնը աւելացնել (եկան փնտռելու համար): Բայց չը պէտք է նմանապէս շփոթել անորևոյթի տրականը՝ հայցականի հետ (խնդիր - սեռին հետ)· այսպէս այլ է՝ Գիրը կարդալ մոռացել եմ (միտքս չեկաւ, որ կարդայի) և այլ է դարձեալ՝ Գիր կարդալը մոռացել եմ (էլ չը գիտեմ գիր կարդալը): Մի քանի բայերի մօտ կարող է թէ պարզ (ուղղական) անորեոյթի և թէ տրական դրուիլ· «Վերջապէս հրամանը կատարել՝ հաճեցաւ», «Վերջապէս հաճեցաւ հրամանը կատարել»: Ա՛յսպէս տարբերը կերպով գործածելու կանոնը և սովորութիւնը այս է. Եթէ անորևոյթը գլխաւոր

բայից առաջ է՝ տրական հոլովի է դրվում, իսկ եթէ յետոյ՝ մնում է անփոփոխ աներևոյթ։

Ի՞նչ փնտռելու (եկան)։ Իրանց հին բոյները ։ Դիմաւոր բայով էլ նոյնպէս պէտք է ասէինք՝ «փնտռում էին, փնտռում են իրանց հին բոյները»։ Ուրեմն աներևոյթը մի և նոյն հոլովով խնդիր է պահանջում, ինչ որ պէտք է ունենայ համապատասխան դիմաւոր բայն, մեր օրինակում՝ հայցական հոլովով (խնդիր - սեռի)։

Այս բարդ նախադասութեան երկրորդ դիմաւոր բայն է «ստացաւ», որ անշուշտ մի անբողջ նախադասութեան արժատ է։ Ո՞վ ստացաւ։ Ջօրութեամբ իմացվում է՝ նա կամ վանէը, որ օտար լեզուներում ներգործութեամբ պիտի դրուի։ Ուրեմն ենթակայ լինել կարող է ոչ միայն գոյական անունը, այլ և դերանունը. աներևոյթն էլ, ածականն էլ անուն - բայի կարող են դառնալ, երբ որ գոյականաբար են գործածվում։

Ի՞նչպէս ստացաւ պայծառութիւնը։ Այդպէս։ Սա մակբայ է։ «Երբ» նոյնպէս մակբայ է ժամանակական, բայց մեր օրինակում նա շաղկապի զօրութիւն ունի՝ գլխաւոր նախադասութիւնը երկրորդականի հետ կապելու համար։

Ուրեմն ինքը բայն կամ բայի բովանդակութիւնն ու իմաստը կարող է որոշուիլ (սահմանուիլ, ամփոփուիլ, բայց ոչ թէ ընդարձակուիլ) հետևեալ միջոցներով.

ա. մակբայով,

բ. հոլովով «ճնճղուկներին տուել էր», «բոյներ փնտռել»,

գ. երբեմն նաև նախադրութիւններով (վերայ, մէջ)։

Մակբայի իմաստը կարելի է հոլովով և նախադրութիւններով ևս ճշդագոյն բացատրել։ «Երբ այդպէս» նոյն է, եթէ ասենք՝ «նորոգութիւնը վերջացնելուց յետոյ»։ Եւ ընդ հակառակ հոլովն էլ կարելի է մի ածականի կամ մակբայի փոխել. «իւր նախկին պայծառութիւնը ստացաւ» գրեթէ այս միտքն ունի՝ «նորոգ, շքեղ, ճոխ կանգնեցաւ»։

Ապա ուրեմն «երբ այդպէս իւր նախկին պայծառութիւնը ստացաւ» երկրորդական նախադասութեան իմաստը՝ կարելի է պարզ արտայայտել «եկան» բայն որոշելով (ընութեան խնդրով), այսինքն այսպէս՝ «վանքը շքեղապէս վերանորոգելուց յետոյ» կամ «վանքի շքեղ վերանորոգութիւնից յետոյ»։ Սոքա այլ ևս նախադասութիւն չեն, որովհետև դիմաւոր բայ չունին։

Միթէ «փնտռելու (համար)» նախադասութիւն չէ՞, քանի որ դա էլ բայ ունի։ Ոչ. որովհետև նախադասութիւն կազմելու համար հարկաւոր է դիմաւոր բայ, իսկ դա հոլոված աներևոյթ է։

Բարդ նախադասության պարփեր.



Համեմատենք և տեսնենք, թէ առաջին և այս երկրորդ բարդ նախադասութիւնների մէջ ինչ տարբերութիւն կայ։ Մինչդեռ առաջին բարդ նախադասութեան ենթական (անուն - բայն) շատ ճոխ վերադիրներ և որոշիչ մասեր ունէր, իսկ նորա բայն մերկ էր մնացել. այս երկրորդն ընդհակառակ լոկ միայն յօդով ենթակայ ունի (ճնճղուկները), բայց բազմաթիւ որոշումներով բայ կամ ստորոգելի, որոնց մէջն է տրական անեղևոյթը (փնտռելու) և «երբ» բառով սկսուած մի յարաբերական նախադասութիւն, որ ժամանակ է ցոյց տալիս։

Էլ ուրիշ ի՞նչ կարող են ցոյց տալ յարաբերական նախադասութիւնները։ Տեղ, պայման, պատճառ, նպատակ և այլն։

Երրորդ նախադասութիւն.

Բայց արեգն զոլորը ծռվուած տեսան։

Դիմաւոր բայն է պեռաւ։ Ո՞վ տեսաւ, ո՞վքեր էին տեսնողները։ Նախադասութիւնը լուռ է մնում այդ մասին, բայց ջրուրեամբ իմացվում

Է՝ նշա, ձնձղ-ինները (ենթակայ)։ Ի՞նչ տեսան նոքա։ Դարձեալ չէ արտայայտած և դարձեալ զօրութեամբ է նշանակուած, թէ տեսան նոցա, բոյները (խնդիր - սեռի)։ Ուրեմն մի նախադասութիւն երկու անգամ զօրութեամբ է իմացնում իւր մասերը, այն է՝ բոլորովին տարբեր պաշտօն ունեցող մասերը (ենթակայ և խնդիր - սեռի)։

Բայց ինչից ենք իմանում, թէ ենթական ձնձղ-ինէն են և ոչ բոյները, իսկ խնդիր - սեռին՝ բոյներ և ոչ ձնձղ-իներ։ Ինչո՞ւ ենք կարծում, թէ նախադասութիւնը այսպէս պէտք է լրանայ՝ «ճնճղուկները տեսան բոյները» և ոչ թէ «բոյները տեսան ճնճղուկներին»։ Այսպիսի բացայայտութիւն այնքան զօրութեամբ մնացած մասերով՝ հայերէն լեզուի յատկութիւնն է. օտար լեզուները աւելի ձգտում են որոշ կերպով և նիւթապես յայտնել նախադասութեան մասերը, ապա թէ ոչ մտքի շփոթութիւն առաջ կու գայ, որից որ ղերծ է մնում մեր լեզուն։ Մեր լեզուի մէջ իմաստը շատ անգամ ճշդիւ իմացվում է մասամբ բառերի դիրքից և պատ-ճառով՝ մասամբ յատ-կութեամբ, մասամբ կշռի բայից և մասամբ նախընթաց խօսքերից։

Այդ հիմունքներով քննենք մեր նախադասութիւնը։ Եթէ նախադասութիւնը իւր երկու անդամը զօրութեամբ է արտայայտում, այդ ապացոյց է, թէ նոյն առարկաների մասին նախընթաց խօսքերում արդէն մի ակնարկ կար, և արդարև մենք էլ գիտենք, որ այն տեղ խօսուել էր ճնճղուկների ու բոյների մասին։ Ուրեմն սոքա պէտք է լինին մեր քննելի նախադասութեան ենթական և խնդիր - սեռին։ Այլ թէ ո՞րն է դոցանից ենթական, և ո՞րը՝ խնդիր - սեռին, այս էլ մակաբերում ենք «տեսան» բայից. յայտնի է, որ մինը պէտք է լինի տեսնող և միւսը՝ տեսանելի։ Արդ բոյնը չի տեսնում, ճնճղուկը տեսնում է. ապա ուրեմն տարակոյս չը կայ, թէ ո՞րն է ենթական և ո՞րը՝ խնդիր - սեռին։ Բացի սորանից, եթէ կից խօսքերը փոքր ինչ պարզենք՝ նոքա այսպիսի ձև կը ստանան. «ճնճղուկները եկան . . բայց տեսան», որով դարձեալ որոշակի ցուցանվում է, թէ «տեսան» բայի ենթական ո՞րն է։ Ապա այս էլ աւելացնենք, թէ եթէ յայտնի չէ ի՞նչ տեսնելը, գէթ յայտնի է ի՞նչպէս տեսնելը, այսինքն «ծեփած տեսան»։ Իսկ նորոգուած շինութեան մէջ ծեփած կը լինին բոյները և ոչ թէ ճնճղուկները, որոնք բացակայ էին նորոգելու միջոցին։

Հիմա գանք յօդառութեանը։ Նախադասութեան մէջ մի տարակուսելի բառ էլ ունինք՝ «բոլորը»։ Այս ածականը, որ ը յօդով գոյականաբար է դործ դրած, բացայայտիչ տեղ է բռնում նախադասութեան մէջ. (մեզ այնպէս է թուում, թէ շատերը պէտք է խորշեն նախադասութեան այդ անդամը բացայայտիչ կոչելու)։ Բայց որի՞ բացայայտիչն է, ենթակայի՝ թէ սեռի խնդրի։ Եթէ անվիճելի համարենք մեր ենթադրութիւն-

ներըը, թէ այն երկու բառերից որն է ենթական և որը խնդիր - սեռին, այնու ամենայնիւ որոշ չի լինի, թէ յատկապէս նոցանից ո՛ր մէկի բացայայտիչ է մեր տարակուսելի բառը։ «Բոլորը» երկու նշանակութիւն կարող է ունենալ, ինչպէս երևում է հետևեալից. «բոլոր (ճնճղուկները) ծեփած տեսան (բոյները)» կամ «(ճնճղուկները) բոլոր (բոյները) ծեփած տեսան»։ Նոցանից ո՛րը պէտք է հասկանանք մեր նախադասութիւնից, արդեօք «բոլոր ճնճղուկները» թէ «բոլոր բոյները»։ Միայն ամբողջ իմաստի ըմբռնումը լոյս կարող է սփռել վերևի նախադասութեան վերայ, որպէս զի նորա մասերի քերականական պաշտօնը ևս ուղիղ հասկանանք։ Աւելորդաբանութիւն կամ չնչին տեղեկութիւն կը լիներ, եթէ նախադասութեան հաղորդած միտքը այս լինի, թէ տեսնող ճնճղուկները՝ բոլոր ճնճղուկներն են եղել, այլ անշուշտ աւելի նշանակութիւն կունենայ, եթէ իրանց հին բոյները փնտռողների դէմ ծանուցանէ, թէ բոլոր բոյները ծեփուած են եղել։ — Այժ եթէ վիճելի համարուի այն խնդիրը, թէ երկու բառերից ո՛րն է խնդիր - սեռին, արդեօք այն ժամանակ «բոլորը» կարո՞ղ էր մի որ և է նշան լինել տարակուսութիւնը փարատելու համար։ Ի հարկէ, եթէ ունենանք մի այսպիսի նախադասութիւն «բոլոր ճնճղուկներին սպանած տեսանք», և ուզենանք խնդիր - սեռին միջից պղղջել կարող ենք այն ժամանակ ասել «բոլորը սպանած տեսանք», ոչ այլ պէտք է շնչաւորի համար անկինք «բոլոր սպանած տեսանք»։ (Եթէ երբեմն շնչաւորի համար միւս ձևն էլ գործ է դրւում, այդ ներելի է այն ժամանակ, երբ որ բառերի դիրքը շփոթութիւն չի առաջացնում)։ Ուրեմն վերջ ի վերջոյ պնդում ենք, թէ «բոլոր» բացայայտիչ է խնդիր - սեռիի, իսկ խնդիր - սեռին է բոյները։

Բացայայտիչը նախադաս, եղակի և անհոլով է լինում, եթէ բացայայտեալի հետ ի միասին է դրուած. բոլոր բոյները, բոլոր ճնճղուկները, բոլոր բոյներին, բոլոր ճնճղուկներին։ Իսկ եթէ մէնակ է և անհոլով այն ժամանակ ը յօդ է աւելանում վերան (բոլորը). ապա թէ ոչ՝ համապատասխան հոլով է առնում. բոլորից տղացաւ, բոլորին տեսաւ, բոլորի մէջ բաժանեց և այլն։ Ցետադասը թուով և հոլովով համաձայն պէտք է լինի, եթէ իմաստը յատուկ փոփոխութիւններ չը պահանջէ։ «Պարսիկներին, այն ոխերիմ թշնամիներին» — թիւ և հոլով նոյն. «Կելտերից, այդ եւրոպական ցեղից» — հոլովով նոյն, թուով ոչ։

Ոչ միայն բացայայտչի ձևով այլ ուրիշ կերպ ևս գոյականը գոյական վերադիր կարող է լինել, այն է իբրև յատկացուցիչ (միշտ սեռական), իբրև հոլոված բառ նախադրութեամբ կամ առանց նախադրութեան։ Եւ որովհետև նոցանից ոմանք բայի խնդիր ևս կարող են լինել, ամենամեծ մտադրութեամբ պէտք է որոշել, թէ արդեօք նոքա բայի խնդիր են թէ գոյականի որոշիչ։

Սեռականը շատ քիչ դէպքերում բայի խնդիր է դառնում, զոր օր. «Նախնեաց վառքը ժառանգներինը կը համարուի»։ Այս նախադասութեան մէջ սեռականը ի՞նչ է որոշում (ո՞ր բառն է պահանջում այդ խնդիրը)։ Կը համարուի։ Բայց ինչո՞ւ ոչ «վառքը»։ Որովհետև «վառքը ժառանգներինը» բառերի կապակցութիւնը իմաստ չունի, իսկ որի՞ (վառք) կը համարուի — «ժառանգներինը»՝ հասկանալի է։

«Մեզ սովորեցրին սէր առ Աստուած» նախադասութեան մէջ՝ նախադրութեամբ հոլովը ի՞նչ բառի խնդիր է։ — Սէր։ Եւ ինչո՞ւ ոչ սովորեցրին բայի։ Որովհետև «սովորեցրին առ Աստուած» բոլորովին անհասկանալի կապակցութիւն է, իսկ «սէր առ Աստուած» շատ լաւ հասկանալի է։

Մեր օրինակում այդպիսի որոշումներ ունին «ստացաւ» և «եկան» բայերը։ «ոտքս» իւր նախկին պայծառութիւնը», «եկան փնտռելու»։

Կաղմիր սեռականով վերադիրներ (յատկացուցիչ)։ «Թագաւորի յաղթութիւն, գաշտի ծաղիկներ, մատնիչի մահ»։ Նոյնպէս և դէպականների համար հոլոված խնդիրներ։ «աշխարհքի մէջ երևելին», «բլրի վերայ կանգնածը», «կատուից վախեցողը», «վահանով պաշտպանողը»։

Իսկ մեր նախադասութեան մէջ ի՞նչ տեսակ անդամ է «ծեփած» անցեալ դերբայն (ածական բայանունը)։ Հայցական խնդիր բայի (խնդիր - բնո-ղիեան և ոչ սեռի)։

Որպէս զի այդ գաղափարը ըմբռնենք, մենք պէտք է առ հասարակ բայի խնդիրների մասին պարզ հասկացողութիւն ստանանք։ Մենք արդէն գիտենք, որ բայն որոշվում է մակբայով. դուցէ հարկաւոր է աւելացնել, թէ բացի տեղ և ժամանակ ցոյց տուող մակբայներից՝ կան դարձեալ ինչպիսութիւն և աստիճան նշանակող մակբայներ։ Ինչպէս զոր օր. հետևեալ նախադասութիւններում. «Նոքա եկան յօժար սրտով. խոստ է անձրևում»։ Ցայտնի է նմանապէս, որ բայն որոշվում է զանազան հոլմներով նախադրութեամբ կամ առանց նախադրութեան, որոնց կարգումն է նաև անեռևոյթը (վնտռելու)։

Աւելի դժուար է բայի հոլոված խնդիրը (առանց նախադրութեան)։ Արդեօք բայն կարո՞ղ է ամենայն հոլովով խնդիր առնել։ Այո. ուղղական—«նախանձոտը ամենին ատելի կը լինի»։ «այդ խօսած ներբողներդ աւելի պատուական են քան թէ ֆուֆուն (օտար ոճ կը լինի եթէ ասենք՝ Աւելի պատուական են քան թէ դուխտանէր)։ Հայցական (խնդիր - սեռին յայտնի է, հիմա բնութեան խնդրի օրինակներ բերենք) — «դու քո եղբօրը հեթանո՞ս անուանել ես» (եղբօրը—խնդիր սեռի, հեթանոս—խնդիր - բնութեան), «ոչխարը ընծայ տանել» (ոչխարը—խ. ս., ընծայ—խ. բ.)։ սեռական — «պահանջում էին, որ իշխանութիւնը ատելի լինի», «առնելիսպատրաստ էր Սողոմոնը՝ երբ որ գահը նստեց»։ տրական—«ներեցէք նոյա

որ ձեզ վշտացրել են», «փարաւոնը Եգիպտացիներին յանձնէին ուղարկեց որ հաց գտնեն» (Եգիպտացիներին—հայցական խնդ. սեռի), «գայլը մտեցաւ գառնուկին», «եկան բոյները փնտրելու», «սորա գոյնը նման է խիտում», «որան ի՞նչ են ասում (այսինքն՝ այս բանը ի՞նչ են անուանում). աննախադիր տրական — «մտաւ ներ վրանը», «գնաց պաշտը» (յիւր վրանն, ի դաշտ), «+ալ+ մտնել» (պէտք է զանազանել +ալ+ին դարձաւ և +ալ+ դարձաւ, +ալ+ին ուղարկեց և +ալ+ ուղարկեց). աննախդիր ներգոյական— «այն օրերը՝ Հերոդոս մի մարգարէ կար բանտում», «ալ+ոմը լոյս ունէր», «մանուկ Յիսուսը պոշտի մէջ գտնուեցաւ». բացառական — «եղբօրից լսեցի» (այլ է խնդիր - սեռի բացառականը և այլ է խնդիր - բնութեան բացառականը — բորոտը Հերոդոսից բժշկուեցաւ իս. ս., բորոտը ներ բորոտութենից բժշկուեցաւ իս. բ.), «վախենալ, դադարիլ, խափանել, արգելել, ձանձրանալ—ի բանից». գործիական — «ինքը ներով խոստովանեցաւ», «ընթրմանով խօսեցաւ» (զանազանել գործողը գործակցից. տէրս կառքով էր գնում, ես կառքի հետ. ժամանակով ամէն բան կը փոխուի, մենք էլ ժամանակի հետ. գայլերի հետ ընկով կուտեցանք). Բայց և այնպէս մի հոլով սակաւում է՝ կոչականը. Նա երբէք բայի խնդիր չի գառնում. Ուրեմն բայի մէջ նա ոչինչ չի որոշում. Աներևութի մէջ ոչինչ, իսկ դիմաւոր բայի մէջ դէմքն է որոշում. Ահա «ես, բարեկամ» նախադասութեան մէջ՝ յայտնի որոշում է (դու) երկրորդ դէմքը կամ որի հետ որ խօսվում է.

Այժմ գառնանք յատկապէս բայի կիսակատար բովանդակութիւնը ամբողջացնող մասերին, բայի հայցական խնդիրներին.—

Այն բայերը, որոնք գործողութիւն են արտայայտում, մեծ մասով պահանջում են հայցական խնդիր. Այդ հայցականը կոչվում է խնդիր - սեռի, իսկ իրանք բայերը՝ ներգործական բայ. Նորա միշտ կարող են կրաւորական ձև ստանալ. « Ես հարցնում եմ նորան — նա ստանում է հարցմունքներ (լաւ չէ ասել՝ նա հարցնվում է). նա ինձ հարցնում է— ես հարցափորձի եմ ենթարկվում (լաւ չէ՝ ես հարցնվում եմ). Ուրեմն ինչ որ ներգործականի մէջ խնդիր - սեռի էր, այն գառնում է կրաւորականի մէջ ենթակայ.

Խնդիր - սեռիների առարկաները երկու տեսակ են. այլ են այն առարկաները, որոնք որ զանազան գործողութիւններով որ և է փոփոխութիւն են կրում. « ես վեր եմ առնում գիրքը, պատռտում եմ գիրքը». Այլ են և միւս առարկաները, որոնք որ գոյութիւն են առնում միայն գործողութիւններից յետոյ. « նա շինում է մի սայլ. ես նամակ եմ գրում». Շինելուց և գրելուց յետոյ միայն գոյանում է սայլն ու նամակը. առաջ դրանք չը կային.

Անցեալին էլ խնդիր - սեռի կարող է լինել, և եթե անցեալը ներգործական բայ է, նա էլ կարող է իւր կողմից ուրիշ խնդիր - սեռի պահանջել. «բնաւորը կամենում է մեզ սպանել (կամենում է մեր մահը)» —սպանել՝ խնդիր - սեռի կամենում է բայի, իսկ մեզ՝ խնդիր - սեռի սպանել բայի։

Այնպիսի գործողութիւն ցոյց տուող բայեր էլ կան, որ ուրիշ անձի վերայ չի անցնում, այլ մնում է նոյն անձի վերայ. «դու քնեցար, մանուկը լաց է լինում, շունը վազում է»։ Դոքա չեզոք բայեր են և խնդիր - սեռի չունին։

Այն բայերը, որոնք ուրիշին մի բան անել տալ են նշանակում, կոչվում են անցողական և ածանցվում են ներգործականից՝ ցնել մասնիկ առնելով. հաւանել — հաւանեցընել, կարդալ — կարդացընել, խմել — խմեցընել։

Մի և նոյն մասնիկով չեզոքն էլ ներգործական կարող է դառնալ. մեռնել — մեռցընել, յոգնիլ — յոգնեցընել, խաղալ — խաղացընել, թռչել — թռցընել (ուրեմն ամենայն ցնել վերջով բայն անցողական չէ, այլ միայն նա՝ որ ներգործականից է առաջ եկել)։

Ցուլ բայն շատ անգամ ցնել յանգի տեղ է բռնում. բանալ տալ, անել տալ, դնել տալ, մաքրել տալ, բայց աւելի գործածական է միանգամայն երկուսի գործածութիւնը.

Լուել, չեզոք — լուցընել, ներգործ. — լուցընել տալ, անցողական.

Հոսիլ, ներգ.—հոսեցընել, անցող. — հոսեցընել տալ, կրկին - անցողական։

Վերջապէս կան՝ եակաև բայ անունով չեզոք բայեր, որոնք մի քանի ուրիշ չեզոքների հետ ուղղական խնդիր են առնում. այս ուղղականը ենթակայից զանազանելու համար կոչում են՝ ուղղական խնդիր բնութեան։ Ձոր օր. Կեսարն էր մեծ զօրապետ, ծաղիկը պտուղ է դառնում, հնազանդ եղիր, նա բախտաւոր է երևում։

Մի քանի բայեր մեկից աւելի հոլով են խնդրում։ Այսպէս տալ բայն ուղում է հայցական և տրական (ինչ, ում)։ Երբեմն երկու խնդիրներ է պահանջվում, որոնք խնդիր - սեռ ինների նշանակութիւն ունին. այսպիսի զարմանալի օրինակներ են՝ Գիրքը ինձ նստեց մի աբասի, ես սովորեցնում եմ նորան այս արուեստը, նա հարցրեց ինձնից այս կանոնը։ Մի և նոյն միտք կարտայայտուի, եթե բայն համեմատ կերպով փոխուի, խնդիրներից մեկը ենթակայ դառնայ, իսկ միւսը անփոփոխ մնայ. Ես վճարեցի մի աբասի, նա սովորեց այս արուեստը, ես ասացի նոյն կանոնը։

Նշանաւոր է երկու հայցական խնդիրների միաւորութիւնը, որոնցից մեկը խնդիր - սեռի է, միւսը՝ խնդիր - բնութեան (և հենց սորա օրինակն է երևում մեր նախադասութեան մէջ)։ Շատ բայեր այդպիսի կապակցու-

թիւններ են առաջ բերում, զոր օր «ես կոչում եմ Նորան մեր ազատիչ», ուր «Նորան» խնդիր - սեռի է, «մեր ազատիչ» հայցական խնդիր - բնութեան։

Ի հարկէ բնութեան խնդրի հայցականով ճշդադոյն որոշվում է խնդիր - սեռին, բայց ոչ անմիջապէս (իբր վերադիր), այլ միայն դիմաւոր բայի կամ ստորոգելու օգնութեամբ։ Երբ որ ես ասում եմ «նա թագաւորին գերի առաւ», թագաւորը գերութեան յատկութիւն է ստանում առնելուց յետոյ, իսկ դորանից առաջ նա այդ յատկութիւնը տակաւին չունէր։ Այլ է եթէ խօսքը այսպէս ձևանար։ «նա գերի թագաւորին առաւ իւր պաշտպանութեան ներքոյ»։ Այստեղ պաշտպանութեան ներքոյ առնելուց առաջ արդէն՝ թագաւորն ունի իւր անձի մէջ գերութեան յատկութիւնը։ այս վերջին նախադասութեան մէջ գերի բառը թագաւորի ածականը կամ վերադիրն է։

Իսկ առաջին նախադասութեան մէջ «գերի թագաւոր» դաղափարը դեռ ևս նոր է կազմվում (առնուեցաւ բայի միջնորդութեամբ), որովհետև երբ որ լսում եմ, թէ մէկը թագաւորին գերի առաւ, միայն այն ժամանակ գիտեմ, թէ թագաւորը է էրէն։ Ուրեմն սեռի խնդիրն ու հայցական բնութեան խնդիրը միշտ այնպէս են կապուած, որ հնարաւոր չի միջնորդութեամբ կարող է կազմուել մի նոր նախադասութիւն, ուր առաջուայ խնդիր - սեռին ենթակայ կը դառնայ, իսկ հայցական բնութեան խնդիրը՝ ուղղական խնդիր - բնութեան։ «նա է մեր ազատիչ», «թագաւորը գերի է»։ Այսպիսի փոխոխութիւն անհնարին է վերև յիշած՝ նմանեց, սովորեցրեց, հարցրեց բայերի երկու խնդիրների նկատմամբ (անմոութիւն է եթէ ասենք «ես եմ աբասի, նա է արուեստ, ես եմ կանոն»)։

Այս բոլորից հետևում է, թէ հայցական բնութեան խնդիրը*) այն-

(*) Երբեմն նախադրութեամբ հոլովը ճիշդ նոյն նշանակութիւնն ունի (բայց այն ժամանակ ի հարկէ նա էլ հայցական խնդիր - բնութեան չի կարող կոչուիլ)՝ Զոր օր. «այդպէս առանց կրքերի, այդպէս անաչառ չէի երեւակայում քեզ»։



Որով պարզ երեւում է, թէ նախադրութեամբ հոլովն ու հայցական բնութեան խնդիրը մի եւ նոյն պաշտօնն են կատարում նախադասութեան մէջ։

պես է վերաբերում իւր սեռի խնդրին, ինչպես ուղղական բնութեան խնդիրը իւր ենթակային։ (Յայտնի է, թէ ինչ տաժանելի աշխատանք է աշակերտներին հասկացնել զանազան խնդիրների անշփոթ որոշումը. միակ միջոցն է, որ նոքա բազմաթիւ վարժութիւններով ըմբռնեն համազօր նախադասութիւններ կազմելու գաղտնիքը)։

Հայցական բնութեան խնդիրը ոչ միայն գոյականից կամ ածականից կարող է կազմուիլ (ինչպես վերևի օրինակներում), այլ և անեղևութիւից. «նա ինձ սովորեցրեց ջրել», «ես պատուիրեցի նորան գնալ»։ Ա յսպիսի կապակցութիւնները կոչվում են ռնեքսուով հայոպան, որ հին լեզուներում խիստ գործածական ձև է։ Հայերէն լեզուի մէջ այդ անեղևոյթը բացի հայկանից՝ ուրիշ հոլովներ ևս ստանում է։

Եւ որովհետև այդ հայցական բնութեան խնդիրը ինքն արդէն բայ է, ուստի և նորանից ու սեռի խնդրից կազմուելիք նոր նախադասութիւնը՝ առանց էական բայի օգնութեան է ձևանում. ես գրում եմ, նա գնում է (էլ չենք ասում՝ ես գրող եմ, նա գնացող է)։

Դանք մեր օրինակի նախադասութեան։ Այն տեղ զօրութեամբ խնդիր - սեռին է՝ բոյները, իսկ հայցական խնդիր - բնութեան՝ ծեփած, որով մի նոր նախադասութիւն կարող է կազմուել այսպէս՝ բոյները են (էին) ծեփած։



Թէ հայցական բնութեան խնդիրը կախում ունի երկու անդամից (դիմաւոր բայից և սեռի խնդրից), այդ մատնացոյց ենք անում երկու կողմից էլ գիծ քաշելով դէպի հայցական բնութեան խնդիրը։

Պատկերի մէջ «բայց դիտմամբ չենք նշանակել, որովհետև նորանով կապվում են ոչ թէ նախադասութեան անդամները, այլ երկու գլխաւոր նախադասութիւնները. «նոքա եկան. բայց տեսան»։

Այն աշակերտը, որ առաջին անգամ ծանօթութիւն է ստանում նախադասութեան կազմութեան հիմունքների մասին, շատ անգամ կը դժուարանայ ղանաղանել պարզ անորեւութից կախուած խնդիր-սեռին՝ անորեւութով հայցականից կամ այլ հոլովից։ Անշուշտ ուսուցիչը չի շտապի այսպիսի բաներով վաղօրօք զբաղեցնել աշակերտներին, այլ կը սպասէ մինչև որ ընթերցանելի յօդուածները լաւ առիթներ տան այդ բաների համար։ Շատ անգամ բառերի դիրքը շփոթեցուցիչ են։ «Մի թողէք ձեզ իմ տարակոյսներից շփոթել»։ Շատերը կը կարծեն, թէ «ձեզ» կախուած է «մի թողէք» բայից։



Այդ տեղ տեսնում ենք բացառականով անորեւոյթ։ Իսկ հետեւեալ նախադասութեան մէջ գլխաւոր բայն չունի անորեւութով հայցական կամ այլ հոլով, այլ միայն պարզ անորեւոյթ, որից կախում ունի հայցական բնութեան խնդիրը իւր սեռի խնդրով. «նա ուղում էր իւր ձեռքը արիւնից մաքուր պահել»։



Կարելի է «մաքուր» մակբայ ևս համարել, բայց այդ պատճառով պատկերի մէջ ոչինչ չի փոխուի։

Հաստարակ խօսակցութեան ժամանակ էլ կարող են երբեմն երեք չորս զանազան բայերին պատկանող հայցականները իրար յաջորդել. «խընդրում եմ քեզնից այդ բանը մի և նոյն օրը ինձ իմացնել տալ».



Կամ կարող է հոլոված բնութեան ինդրով մի ինդիր-սեռին՝ կախում ունենալ միւս այդպիսից. «չը թողնես սատանային փորձել քեզ նենգելով».



Հետևեալ նախադասութեան մէջ ընաւ չը կայ անորևութով ինդիր-սեռի, «դուք ուշ ղում էիք ինձ սպանել տալ».



Չորրորդ բարդ նախադասութիւն.

«Էլ ինչի՞, աղաղակեցին նոքա, հիմա էլ ինչի՞ն է պէտք այսպէս ահագին շէնքը»։

Այս տեղ երկու դիմաւոր բայ կայ՝ աղաղակեցին, պէտք է. ուրեմն երկու նախադասութիւն է։ Դոցանից ոչ մէկը երկրորդական կամ յարաբերական նախադասութիւն չէ։

Արդեօք «էլ ինչի աղաղակեցին նոքա» մի նախադասութի՞ւն է կազմում։ Ոչ։ Եւ ինչո՞ւ։ Որովհետև նախ բառերի այդ տեսակ կապակցութիւնը անխորհուրդ է իւր մտքով։ Դա կը լիներ նոցա աղաղակի նպատակը հարցնող մի նախադասութիւն։ Իսկ մինչև այդ բանը հարցնելու՝ միթէ եղե՞լ է որ և է խօսք առ հասարակ աղաղակելու կամ մանաւանդ բացէ ի բաց նոցա աղաղակելու մասին. մանաւանդ, որ աւելի կարծիքակոնը այն է, թէ արդեօք ո՞վ պիտի լինի հարցնողը և ո՞վ հարցում ստացողը։ Երէ՞ր՝ արդէն կէտադրութիւնն ու չակերտները պարզ ցոյց են տալիս, թէ «էլ ինչի» ղատուած է «աղաղակեցին նոքա» բառերից և պէտք է սոցանից հետևեալ խօսքի հետ կապուած համարել։

Ուրեմն մի գլխաւոր նախադասութիւն միւսի մէջ ներմուծած հիւսուած է։ Շատ անգամ պատահում է, որ խօսուածքներում աւելացնում են «ասաց նա»։ Բայց այդպիսի ներմուծութիւնները անհրաժեշտ կարևոր չեն։ Մենք կարող էինք խօսքին այսպիսի կարգ ևս տալ. Նոքա աղաղակեցին. «էլ ինչի՞, հիմա էլ ինչին է պէտք և այլն»։ Միայն այս ձևը այնքան կենդանութիւն չունի։ «Էլ» բառը «այլ ևս» կամ «ապա ուրեմն» եզրակացնող շաղկապի նշանակութիւն ունի։ Այդպիսի շաղկապները կարելի է պատկերի մէջ կամ բոլորովին բաց թողնել, կամ, որպէս զի նախընթաց նախադասութեան հետ ունեցած կապը ցոյց տրուի, այնպէս նշանակել, ինչպէս որ յետադայ պատկերից երևում է.

պատկեր.



Վերջին բարդ նախադասուլթիւն.
«Վեր կացէք, այս անօգուտ քարակուտից հեռանանք»։

Երկու կարդակից (դլխաւոր) նախադասուլթիւններ են առանց որ և է քերականական շաղկապի, բայց իւրեանց իմաստով խիստ սերտ միացած։ Առաջին նախադասուլթիւնը միայն մի բառից է բաղկացած, հրամայական բառից։ Բայց և այնպէս, ինչպէս և ուրիշ ամենայն նախադասուլթեան մէջ, նորանում երկու հանգամանք է ամփոփած՝ ա. մի վիճակ (այն տեղ՝ մի շարժուում, վեր կենալը) բ. մի դէմք (անձն), որի հետ որ նոյն վիճակը սերտ միացած է երևում (այս տեղ՝ այն ճնճղուկները, որոնց հետ որ խօսում են)։ Եթէ այս դէպքում հարկաւոր լինէր ենթական ներգործուլթեամբ նշանակել, այդ բանը պետք է մի որ և է կոչականով կատարուէր, ղոր օր. Վերկացէք սիրելիք։ Սովորուլթիւն է կոչականը ստորակէտով զատել։

Հասկանալի է որ «վեր կացէք» նախադասուլթեան համար աւելորդ է պատկեր կազմել, որովհետև մենք պետք է գրէինք միայն դիմատոր բայն և աւելի ոչինչ։

Երկրորդ նախադասուլթեան մէջ ի՞նչ խորհուրդ ունի «անօգուտ քարակուտից» բառերի վերջի «այս» աւելադրուլթիւնը։ Դա մատնացոյց է անում և յիշեցնում է նախընթաց «այս մեծ շէնքը» բառերը և այդպէս միայն հասկանալի է կացուցանում թէ ի՞նչ պետք է հասկանալ քարակոյտ դոյականով. շէնքն էլ ունի ցուցական դեր անուն, որով յիշեցնում է վանք նախընթաց բառը. ապա թէ ոչ աւելորդ և անհասկանալի կը լիներ «մեծ շէնքը» բառից առաջ «այս» ածականը։ Ամբողջ յօդուածը սկսվում է անորոշ մասնական անունով (մի), և նա չէր կարող սկսուել «այս» աւերակ

վանք» բառերով, որովհետև անհնարին էր իմանալ, թէ ինչ է ցուցանում «այս» ցուցականը։



Նկատելու է, որ մի նախադասութիւն երկրորդ դէմքով է ձևացած, միւսը՝ առաջին դէմքով. վեր կացէք (դուք), հեռանանք (մենք)։ Նկարագրութեան կենդանութիւն է. դուք էլ ինչ հեռ վեր կացէք և ասենք հեռանանք։ Հայերէնում «վեր կացէք, հեռանանք» ոճը միևչև անգամ մի բայ է համարվում։

Վերլուծութիւնը իսկապես վերջացուցինք։ Մենք տեսանք, թէ լեզու ուսումնասիրելու համար անպատճառ հարկաւոր չէ քերականութեան գլուխներն ու յօդուածները սովորել կրթով, այլ աւելի կենդանութիւն է ատանում աշխատութիւնը, եթէ ընդերցանութեան մէջ պատմենք հիմք է դառնում ուսումնասիրութեան համար։ Ցետոյ տեսանք, որ քերականական լուծումը երկու տեսակ է. մինը ցոյց է տալիս լեզուի անշարժութիւն, մեռելութիւն, միւսը՝ նորա ծլումը, զարգանալը, բարգաւաճիլը։ Թողնում՝ ենք, որ ինքը ուսուցիչը դոցանից ընտրութիւն անէ իւր համար և տեսնէ, թէ ո՞րն է արդիւնաւորը։

Ա՛յժմ համառօտիւ ծանօթանանք, թէ էլ ուրիշ ի՞նչ վարժութիւններով կարելի է լեզուի մի և նոյն նիւթը՝ աւելի ևս սեփականութիւն դարձնել ուսանողի։

ՎԵՐՆԱԳԻՐ։ Արդեօք «ճնճղուկներ» վերնագիրը բացայայտ կերպով հասկացնում է առակի բովանդակութիւնը, արդեօք լրի՞ւ անուանում է պատմուածքի գլխաւոր իմաստը։ Ո՛չ. այդ վերնագիրը աւելի կը յարմարի, եթէ ուղենայինք նոյն կենդանեաց բնական - պատմական նկարագրութիւնը տալ։ Ի՞նչ բառերով կը յայտնուի առակի ճիշտ բովանդակութիւնը,

անձնավորության պատասխանատվությունը, անձնական խնդիր կամ աւելի ևս ճշդիւ՝ անձնական ինքնության (ինքնի, անխտաս) պատասխանատվությունը։

ԱՄՓՈՓՈՒՄՆ։ Առաջին գլխաւոր բովանդակութիւնը ամփոփենք իր իսկ նախադասութեան ձևով։ «Մի հին աւերակ դարձած վանքի մասին՝ նորա վերանորոգութիւնից յետոյ՝ ճնճղուկները վճիռ դրին, թէ նա հիմա մի անպէտք քարակոյտ է դարձել»։ Կամ եթէ աւելի կարճ, հատուկ նախադասութեան ձևի վերածենք։ «Մի աւերակ վանքի մէջ բոյն դրած ճընճղուկները՝ նորա վերանորոգութիւնից յետոյ՝ նոյնը համարեցին արդէն մի անօգուտ քարակոյտ»։

Էական բովանդակութիւնը այսպէս կարճ արտայայտելու համար, ո՛ր անէական մանրամասնութիւնները ղողեցինք (բաց թողեցինք)։ 1) Թէ ինչ չափ ճնճղուկների բոյն էր եղել այն վանքը (բարձրութիւն)։ 2) Թէ նա շատ դեղեցկացաւ (իւր նախկին պայծառութիւն)։ 3) Թէ ճնճղուկները նորոգութեան միջոցին հեռացան և աւարտելուց յետոյ դարձան (կրկին եկան)։ 4) Թէ սիրով կուզէին դարձեալ նոյն տեղերում ապրել (փնտռելու)։ 5) Թէ այն խորշերը, ուր որ իրանց համար բոյներ էին շինել, այժմ ծեփել էին։ 6) Թէ միմեանց հրաւէր կարդացին ընդ միշտ թողնել այդ տեղերը (հեռանանք)։

Ուրեմն մինչև որ այսպիսի անէական մասերը կանխաւ չը որոշենք, մենք չենք կարողանայ ընդարձակ ասութիւնը կարճ ամփոփել։

ԱՌԱՆՑ ՑԱՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՒԱՑՈՒՄՆ։ Որովհետև շարադրութեան արուեստի ճոխութիւնը մասամբ կախուած է այն բանից, թէ արդեօք նա ի՞նչպէս է ձևակերպում իմաստի յարաբերութիւնները,—դէմ առ դէմ կարդենք մեր առակը երկու կերպով։ Նախ նոյնութեամբ, ապա այնպէս, որ իւրաքանչիւր դիմաւոր բայից՝ մի ստորոդ նախադասութիւն կազմուի, ուրեմն ամբողջութիւնը իւր արուեստական յարաբերութիւններից մերկացած։ Համեմատութիւնը ցոյց կուտայ, թէ մի կողմում կապուած նախադասութիւնները՝ միւսում լուծվում են, նոյնպէս ընդհակառակ, և կամ թէ երբեմն յետևառաջութիւններ ևս ծագում են.

Մի աւերակ վանք, որ բազմաթիւ ճնճղուկներին ապաստան էր տուել, նորոգուեցաւ։ Երբ այդպէս իւր նախկին պայծառութիւնը ստացաւ, ճնճղուկները կրկին եկան իրանց հին բոյները փնտռելու, բայց արդէն բոլորը ծեփած տեսան։

Մի աւերակ վանք բազմաթիւ ճնճղուկներին ապաստան էր տուել։ Մի օր նա նորոգուեցաւ և իւր նախկին պայծառութիւնը ստացաւ։ Եւ ահա ճնճղուկները կրկին եկան իրանց հին բոյները փնտռելու։ Բայց արդէն բոլորը ծեփած տեսան։

ՎԵՐԱԴԻՐՆԵՐԻՑ, ՈՐՈՇԻՉՆԵՐԻՑ, ԽՆԴԻՐՆԵՐԻՑ — ԱՄԲՈՂՋ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ։ Պէտք է նախադասութեան որոշիչ անդամները՝ ամբողջ (յարաբերական կամ գլխաւոր) նախադասութիւնների դարձնենք, առանց իմաստը փոփոխելու։ Փոխանակ հոլոված անորեւութի «իրանց հին բոյները փնտռելու»՝ կարելի է ասել «և ուզում էին իրանց հին բոյները փնտռել» («և» շաղկապով միացած դասակից գլխաւոր նախադասութիւն), կամ «որովհետև իրանց հին բոյները փնտռել էին ուզում» (հիմք արտայայտող կցորդ նախադասութիւն, պատճառական նախադասութիւն), կամ նաև «որպէս զի իրանց հին բոյները փնտռեն» (նպատակ արտայայտող կցորդ նախադասութիւն, վախճանական նախադասութիւն)։ բայց այս վերջին փոփոխութիւնը միւսներից աւելի խորթ է հնչում ականջին, գուցե աւելի լաւ է ասել «որպէս զի . . . գտնեն»։

Հայցական բնութեան խնդրի հետ սեռի խնդրի զուգադրութիւնը (արդէն բոլորը ծեփած տեսան) կարելի է դարձնել սեռի խնդրի նշանակութիւն ունեցող նախադասութեան «տեսան՝ որ նորա ամէնքը արդէն ծեփած էին»։

ԱՌԱԿ։ Այս փորը պատմութեան ընդհանուր միտքն ինչ է, դորանից ինչ լաւատ կարող ենք հանել։ Ինչ որ մարդու համար կարևորագոյն է, անասունների համար բնաւ արժէք չունեցող բան կարող է լինել։ Աքաղաղն էլ չը գիտէր, թէ ինչ անէ ադրի մէջ գտած ադամանդը։ Բայց ի հարկէ ընդ հակառակն էլ կը պատահի։ Մի թէ մարդ կարող է չը սարսափել այն օգից, ուր որ խոզը սիրով շրջում է, և այն կերակուրից, որ այդ կենդանին ագահութեամբ լափում է։ Ոչ ամենեցուն ամենայն ինչ պատշաճ։

Այսպիսի ընդհանուր միտք՝ յատուկ մտացածին եղելութեան օգնութեամբ լաւ չէ կացուանել, մինչև անգամ երբ մէջը անկարելի բաներ չեն հիւսուին, ինչպէս որ է կենդանեաց խօսելն, ահա այս է առակի էութիւնը։

Վերջին տեսակ վարժութիւնների մասին աւելի մանրամասնութիւններով խօսելը՝ ուրիշ անգամին թողնենով կնքենք մեր ասածները։

Մի փոքրիկ առակ դասերի ժամանակ այսքան քերականական բացատրութիւններով ուշում նասիրել տալ՝ անկարելի է։ Թէ ինչպէս պէտք է կազմուին իսկական դասերի օրական պարապմունքները, այդ ուրիշ խնդիր է։ Մեր նպատակն էր ընդհանրապէս ցոյց տալ միայն, թէ ինչպէս ընթերցանի հոգուածները հետ կարելի է արդիւնաւոր կերպով միացնել քերականական լուսաբանութիւնները, ուստի և անհամեմատ աւելի նիւթեր նշանակեցինք,

քան հնարաւոր է մի առակով աշակերտին բան հասկացնել։ Եթէ մեր ասածները բազմաթիւ հատուածների օրինակներով բացատրէինք, այն ժամանակ այս գրուածքը պէտք է շատ և շատ աւելի ձգուէր։ Մենք մինչև անգամ ոչ մի խօսքով չը յիշատակեցինք պոբբէրոնեան կազմուածքը, որովհետև մենք ուզում էինք համոզել ընթերցողին, թէ պարբերութեան գաղտնիքը՝ իսկապէս պարզ նախադասութեան շէնքի մէջ է ծածկուած։

Պարզ նախադասութեան շէնքը անկարելի է մի դասում հասկանալի կացուցանել։ Դորա համար հարկաւոր են բազմաթիւ դասեր և տեսակ տեսակ հատուածները կարդալու առիթներ։ Երբ որ աշակերտները արդէն հասկացել են նախադասութեան անդամների քերականական բնութիւնը, այնուհետև էլ հարկ չը կայ ձանձրացնել նոցա և անդադար ասեցնել իրանց կուշտ գիտեցածները, կամ թէ միշտ նոյն միաձևութեամբ գծել տալ քերականական պատկերները։ Բանը այն չէ, որ աշակերտը ձեռք բերէ մեքենայութեան աստիճանի հասնող վարժութիւններ, այլ որ նա իւր մտաւոր ճրագի լուսով ըմբռնէ քերականական կապն ու առնչութիւնները։ Մենք ինչպէս որ ըմբռնել ենք Հ. Արսէն Այդընեանի վարդապետածները այդ մասին, այնպէս էլ բացատրութիւններ տուեցինք վերև։ Բայց չենք պնդում, թէ ուղիղը մեր ասածն է։ Այդ վճիռը թողնում ենք լեզուագէտներին։ Մենք աւելի պատասխանատու ենք դասատուութեան եղանակի համար։

Հայոց մէջ լեզուի ուսուցչի գործը անհամեմատ աւելի դժուար է, քան ուրիշ ազգաց մէջ։ Այն տեղ եթէ ուսուցիչը վրիպի, աշակերտը իւր պակասները կարողանում է այլ աղբիւրներից լրացնել։ Նա լսում է իւր շրջապատողներից ընտիր լեզու, նա ունի գեղեցիկ մատենագրութիւն, որ անյագ կարդում է և միջից բան է սովորում, իւր թերութիւնները ուղղում է։ Մեր ուսուցիչը ինչ որ անելու է, միայն իւր դասերով պէտք է կարողանայ կատարել։ Նա ոչ միայն ուղիղը պէտք է սովորեցնէ, այլ մտհու և կենաց պատերազմ յայտնէ օտարաբանութիւններին, որոնք ամենայն խորշերից մտնում, աճում, բազմանում են մեր մէնոլորտի մէջ։

Բայց մենք հասել ենք այն վիճակին, որ իրար հասկանալու ընդունակութիւնը արդէն կորցրել ենք։ Մեր արդի լեզուն այնպէս խառնաշփոթուել է, որի մէջ հարազատն ու օտարութիւնը էլ չի որոշվում։ Առաջ մենք տգէտ էինք և մեզ անյայտ չէր մեր գիտութեան չափն ու սահմանը։ Սա ունէր այն լաւ կողմը, որ հեղինակութիւն և քերականութիւն ճանաչում էինք։ Հիմա միամիտ սրտով մեր կիսակատար գիտութիւնը ուզում ենք սրբագործել, պատուանդանի վերայ բարձրացնել, «ինքնուս» և կանոն դարձնել, կարծելով թէ ինչ որ մենք գիտենք, հէնց այն է և հայկաբանութիւնը, և թէ ինչ որ չի համաձայնում մեր անձնական կանոններին, այն հերձուածք է։ Այս շատ վտանգաւոր բան է, մանաւանդ որ

հրապարակախօսութիւնը՝ այն մեծ ոյժը՝ աղաւնին է դարձել մեր պարզամտութեան։ Որպէս զի տարապարտուց խօսած չը լինինք՝ մենք մի օրինակով իրար հասկանալու մօտենանք։

Փ. Վարդանեանը թարգմանել է Շիլլերի «Աւազակները»։ Մի գրաքօս թարգմանութեան մի քանի կտորներ առաջ բերելով և թարգմանութիւնը թերի համարելով՝ ինքն էլ իւր կողմից նոր թարգմանութիւն է անում—անկատարը կատարելագործելու մտօք։ Բայց ո՛վ ղարմանալի թիւրիմացութիւն . . . . Մենք կարող էինք նմանութեամբ խօսել՝ թէ լուսինը արեգակի դէմ են բերել և ուզում են հաւատացնել մեզ՝ թէ այն է իսկական արեգակը։ Խնդիրը այսպէս անձնական ճաշակի և վերջին ծայրայեղութեան հասնելով բանական հիմունքների իշխանութիւնը դժուարացնում է*)՝ մանաւանդ որ արեգակի լոյսը պէտք է տեսնել և ոչ թէ ապացուցանել նորա պայծառութիւնը (տես «Մուրճ»՝ մարտի գրախօս.)։

Ճաշակի այսքան կոպտութիւնը առանց անդրադարձութեան չի անցնում մեր դպրոցներից՝ ուստի և մեր ուսուցիչները պէտք է լինին արթուն՝ արթուն՝ և դարձեալ արթուն . . . . Աշակերտները լաւ չեն խօսում՝ լաւ չեն գրում՝ լաւ չեն մտածում՝ իսկ գրականութիւնը դեռ դարձեալ համրակների ձեռքի մէջն է մնում։

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Դառնանք կրկին Նորավանքի պատմութեան։ Բուսական իշխանը՝ որ ներկայ էր Նախավկայի Նաւահատակաց հանդիսին՝ նուիրեց Նորավանքի երկու եկեղեցիներին և՝ Սուրբ Կարապետին և Սուրբ Նախավկային՝ իւր սեփական Աղբերիս գիւղը վայոց ձորում՝ իւր սահմաններով՝ ջրարբի և անջրդի վայրերով։ Զաքա-

---

(*) Հասկանալի է՝ որ այս տեղ մենք կարող էինք Գրախօսի միայն մի մասնաւոր խնդրի վերայ մտածողոյց անել՝ եւ թէ ինչու չուզեցանք արեգակի մէջ բծեր եւս փնտռել։ Ս. Մ.

ըէ սպասալարը, Լիպարիտի խնդրանօք՝ Ագարակի ձոր գիւղը, որ նորիւ յատկացուցեալ էին, կրկին վերադարձրեց Նորավանքին։

Նորակառոյց եկեղեցու շինող Լիպարիտ իշխանը զարդարեց եկեղեցին սպասներով, գոյքերով և ժառանգութիւններով։ Ապա Սարգիս եպիսկոպոսը մեծամեծ արդիւնք ցոյց տալով եկեղեցուն, գնաց Երուսաղէմ, ուղարկեց այն տեղից Սաեփաննոս Նախավկայի աջը Նորավանքի համար և ինքը այն տեղ տապալուեցաւ մարտիրոսական մահ։

Նորան յաջորդեց նորա քեռորդի Սաեփաննոս եպիսկոպոսն, որ Հայոց Կաթողիկոսի շրջաբերական թղթով նորից հաստատուեց Նորավանքի վերայ Վայոց ձորի, ձահուկի և Նախիջևանի գաւառների։

Նորա օրով Լիպարիտի որդի Սմբատ իշխանը շինեց Նախավկայի եկեղեցու առաջ մի ժամատուն սրբատաշ քարերից՝ իբրև աղօթարանի տեղ, որ և մինչև մեր օրերը կանգուն մնալով՝ նկարագրուած է նախընթաց գլխում։ Սաեփաննոս եպիսկոպոսին յաջորդեց նորա ազգականն՝ Վահրամ Հգնաւորի որդի Սարգիս եպիսկոպոսը։ Նորա օրով Սմբատ իշխանը զարդարեց եկեղեցին աննման սպասներով ոսկուց, արծաթից և պատուական մետաքսից։ Նոյնպէս նաւթրեց մի քանի գիւղեր, այգիներ և այլն, որոնց ցուցակը կբերեմ առանձ։

Տարօրինակ իշխանի հրամանով այս Սարգիս եպիսկոպոսը շինեց Արփայ գիւղի մօտ՝ գետի վերայ մի նշանաւոր կամուրջ, որի աւերակներն կան և այժմ (գլ. ԺԲ.)։ Նորա օրով Սաեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը 736—1287 թուին, Սիւնեաց նահանգի վերայ մետրոպոլիտ ձեռնադրուած, վերադարձաւ Կիլիկիայից և միապետեց երկու աթոռների վրայ, Նորավանքի և Տաթևի։ Սարգիս եպիսկոպոսը Նորավանքում՝ նոր մետրոպոլիտին խոնարհութեամբ հնազանդելով՝ շարունակեց իւր պաշտօնավարութիւնը։

Պատմութիւնը չէ որոշում Սարգիս եպիսկոպոսի մահուան տարին, բայց հաւանական է, որ Սմբատ իշխանի ժամատան վերջին երրորդ կարգի (գլ. ԽԹ.) հարաւածայրի առաջին տապանաքարը դրած լինի նորա գերեզմանի վերայ։ Տապանաքարը

կրում է հետևեալ արձանագրութիւնը։ «Ներիմ շնորհալիը Սարգսի է Սիւնեաց եպիսկոպոսի և անյաղթ հռետորի. թվ. ՉԽԷ (747)»։ Եթէ իսկ սա իմ յիշած Սարգիս եպիսկոպոսն է, ուրեմն նա վախճանուել է 1298 թուին։

Նախավկայի տաճարը կառուցանելուց յետոյ Նորավանքը դարձաւ արդէն տոհմական դամբարան այդ կողմերում իշխող Օրբելեանց նշանաւոր տոհմի համար, որոյ հանգուցեալ անդամները ամփոփուում էին այդ տեղ, մինչև անգամ հեռաւոր տեղերում մեռնողները բերուում թաղուում էին Նորավանքում։ Այս հանգամանքը եպիսկոպոսական աթոռի հետ առաւել ևս բարձրացնում և հռչակում էր Նորավանքի անունը։ Նախավկայի տաճարից յետոյ մինը միւսի յետևից շինուեցին Սիքաոս իշխանի ժամատունը, Տարօսայիճի տապանատունը և Բուրթել իշխանի չքնաղ տաճարը։

Սոցա հետ միասին Նորավանքը հարստացաւ անշարժ կալուածքներով և զանազան նուէրներով, որպիսի հարստութիւն ոչ մի մենաստան Վայոց ձորում չէ ունեցել։ Հարստութեան քանակութեամբ ևս կարելի է բացատրել Նորավանքի բարձր նշանակութիւնը Սիւնեաց իշխանների, հոգևորականների, ազատների և ժողովրդի աչքում։

Կրօնական եռանդով ոգևորուած՝ նուիրատուները իւրեանց հոգեկան մխիթարութիւնը գտնում էին այս և այն մենաստանին մատուցած նուիրատուութեան մէջ։ Եւ պատերի վերայ փորագրուած արձանագրութիւններով ևկեղեցու պաշտօնեաները պարտաւորուում էին յիշել որոշ օրերում իւրեանց աղօթքի մէջ նուիրատուին և կամ նորա ազգականներին։ Արձանագրութիւնները մեծ տեղ էին բռնում այն ժամանակի կեանքի պայմանների մէջ և առանց նորանց մենք այժմ զրկուած կլինէինք հնութիւնների կէս պատմութիւնից։

Այն ժամանակի քաղաքական անապահով դրութիւնը երկրի՝ պատճառ էր լինում սահմանութեանց յաճախակութեան, ուստի նուիրատուն ոչ մի դիմադրող ոյժ չունենալով՝ դիմում էր իւր արձանագրութեան մէջ անվերջ անէծքների, նալլաթնե-

րի և ապիզարների։ Անէծքի հաւասարապէս դիմում էին և իշխանները, և հոգևորականները և հասարակները։ Օրբելեան եպիսկոպոսը, 1294 թուին, մի արձանագրութեան մէջ հազար տարով մի անէծք է դրել, որ այսուհետև և և էլն հպչի-ը տարի պէտք է շարունակուի նորա ոյժը։

Չնայելով այդ անէծքներին, կալուածները, ինչպէս տեսանում ենք նորավանքի պատմութիւնից, շատ յաճախակի յափշտակւում էին և նորից վերադարձւում էին մենաստանին։

Նորավանքի կալուածքները, ինչպէս երևում է Օրբելեանի պատմութիւնից և վանքի պատերի վերայ մեզ հասած արձանագրութիւններից, ձեռք են բերուել կամ իշխանաց հրամանով կամ նուիրատուութեամբ։ Այդ շրջանը տևել է սկսած Յովհաննէս եպիսկոպոս Կասպանեցուց (1105 թ.) մինչև Յովհաննէս եպիսկոպոս (մետրոպոլիտ) Օրբելեան (1312 թ.), մօտ էլն հպչի-ը տարու ընթացքում։

Հետաքրքրութիւնից զուրկ չպէտք է լինի եթէ ժամանակագրական կարգով յիշատակեմ այս տեղ Նորավանքի բոլոր կալուածոց ցուցակը, ցոյց տալով թէ այժմ ում են պատկանում այդ կալուածները, միայն թէ որոշ լինի նորանց ներկայ աշխարհագրական տեղը և սահմանը։

1. Յովհաննէս եպիսկոպոս Կասպանեցին, 1105 թուին, պարսից Մահմուտ Սուլթանի հրամանով տիրեց Նորավանքի տուրը կարապետի մենաստանը իւր շրջակայ վայրով, այժմեան Ամաղուի ձորով։ Այժմ Նորավանքի բոլոր տէրութիները և ձորը ռուսական իրաւունքով պատկանում են Ամաղու գիւղի հետ միասին, Երևանցի Մոհամմադ Եղիազարեանցին։

2. Նոյն եպիսկոպոսը նոյն ժամանակամիջոցում հող է առնում սահմանակից գիւղացիներից — Գանձակեցիներից և Տըխարբեցիներից — յօգուտ մենաստանին։ Գանձակն այժմ աւերակ է, Նորավանքից դէպի հիւսիս և պատկանում է պետութեանը։ Իսկ Տխարը գիւղը Նորավանքի դէմի հարաւակողմի ժայռի գլխին, որ այժմ յայտնի է Հին Ամաղու անունով, և աւերակ է, պատկանում է վերոյիշեալ Եղիազարեանցին։

3. Նոյն եպիսկոպոսի աշխատասիրութեամբ պարսից սուլթանը շնորհում է Նորավանքին հրաշկաբերդը, բայց վրաց Թամար թագուհու աշխարհակալութեան ժամանակ Իվանէ Աթաբէգը այդ բերդը, վայոց ձորի գաւառով հանդերձ, շնորհեց իշխան Լիպարիտ Օրբելեանին։ Բերդն իւր ամբողջ շրջակայքով պատկանում է Զաւայ գիւղի բնակիչ Հասանալի Սուլթանին։

4. Նոյն Յովհաննէս եպիսկոպոսի խնդրանօք՝ պարսից Մահմուտ սուլթանի մայրը շնորհում է Նորավանքին Անապատ բերդը, նորա տասներկու ագարակներով։ Եթէ ներկայումս անյայտ Անապատ բերդը, ըստ իմ վերայիշեալ ենթադրութեան, կանգնած էր կամ էրիվէկ գիւղի կամ, առաւել հաւանական, Ագեաւ գիւղի մօտ, ուրեմն նա իւր ագարակներով պատկանում է պետական գանձարանին։

5. Տէր Սահմանոսի (Փախրըլմահ) խնդրանօք Պարսից աթաբէգ Ելակուզը, 1267 թուին շնորհում է Նորավանքին Ագարակի ձոր գիւղը հողով, ջրով, այգիով, ագարակով և նոյն իսկ Անապատ բերդով։ Բայց որովհետև սորան վանքից յափշտակել էին, ուստի Վրաց սիրապետութեան օրով, Լիպարիտ Օրբելեանի խնդրանօք, Զաքարէ Սպասալարը նորից վերադարձրեց վանքին։ Այժմ յիշեալ գիւղը պատկանում է պետական գանձարանին։

6. Բուլպակ իշխանը՝ Աթաբէգ Իվանէի գործակալը, 1223 թուին ներկայ լինելով Նախավկայի եկեղեցու նաւակատեաց հանդիսին նուիրեց այդ եկեղեցուն և սուրբ Կարապետին Աղբերիս գիւղը իւր սահմաններով, ջրարբի և անջրդի վայրերով, որ գտնուում էր Դարալագեազի այժմեան ենգիջայ և ասերակ Գանձակի միջում, այժմ բոլորովին անյայտ, բայց տեղը պատկանում է պետական գանձարանին։

7. Լիպարիտ Օրբելեանը 1223 թուին նուիրում է Նախավկայի տաճարին Տխարը գիւղն՝ իւր ամէն սահմաններով։ Ինչպէս վերը յիշեցի, այժմ անյայտ այդ գիւղը ներկայ ասերակ Հին Ամաղուն է, ասերակ, որ պատկանում է Սոեվանոս Եղիազարեանցին։

8. Նոյն Լիպարիտ իշխանը նոյն եկեղեցուն նուիրում է Համասրի գիւղում մի թաղ, Այժմ Համասրի գիւղն անյայտ է բոլորովին:

9. Ոմն Շաուլայ, 1256 թուին, նուիրում է իւր ձեռնատունկ այգին, առանց որոշելու գիւղի կամ տեղի անունը:

10. Ոմն Հազարի և իւր ամուսնին Մելիքն ընծայում են մի տուն և մի այգի Զվայ գիւղում: Նոյնանուն գիւղն այժմ պատկանում է նոյն գիւղապետական Հասանալի Սուլթանին: Վերջին երկու (9 և 10) նուէրները գրուած են Սմբատի ժամանակ հարաւային պատի վերայ ներքուստ:

11. Սմբատ իշխան Օրբելեանը, 1261 թուին ընծայել է Աւէշ և Անապատ գիւղերը և մի նորատունկ մեծ այգի, իւր կիւրակերքաջրով, Ակուռի գիւղում: Առաջին գիւղն, այժմ Հաւէշ, մեծ մասամբ պատկանում է իբրև սեփականութիւն իւր ընտանիք ազիւկներին, իսկ փոքր մասն՝ Նայիջեցի բէգերին (գլ. Խ.) Անապատ գիւղն անյայտ է. իսկ Ակուռի, այժմ Ախուռի, պատկանում է Նայիջեցի բէգերին:

12. Նոյն Սմբատը նուիրել է իւր Աղստ գիւղը շրջակայ լեռներով և դաշտերով և բոլոր սահմաններով: Այս գիւղն այժմ չկայ, անյայտ է և անունը: Բայց նա գրած էր կամ այժմեան Խաչիկ գիւղի տեղը կամ սորա մօտ: Տեղը ներկայումն պատկանում է պետական գանձարանին:

13. Նոյն Սմբատը նուիրել է մի մի այգի՝ Զուռայ և Հոդոցիմ և Ծաղկաձոր գիւղերում: Առաջին գիւղը պատկանում է նոյն գիւղացի Հասանալի Սուլթանին. երկրորդն, որ այժմեան Նայիջի գիւղն-է, պատկանում է, իբրև սեփականութիւն, իւր ռամիկ ընտանիքներին: Երրորդն անյայտ է: Գուցէ Դարաչիչագն է:

14. Նոյն Սմբատը նուիրել է Գինէշիկաձորն, ինչպէս ցոյց է տալի ժամանակի արևմտեան պրան մօտ արձանագրութիւնը: Գինէշիկ, այժմ Կնիշիկ հայաբնակ գիւղ՝ պատկանում է Զուռայի Հասանալի Սուլթանին:

15. Նոյն Սմբատն ընծայել է այգիներ Ակուռի, Արիայ և Ա-

մաղաւաձոր գիւղերում: Առաջինն, այժմ Ախուռեի, պատկանում է Նայիջու քէգհերին. երկրորդն՝—Զուռայի Հասանալի Սուլթանին և երրորդը նոյն անունով սեփականութիւն է երևանցի Սահիանոս Եղիազարեանցին:

16. Մահևան անուն իշխանը նուիրել է իւր սեփական Նրբքոյն քերդն իւր անդաստանով: Նրբքոյն, այժմ Ելփին հայաբնակ գիւղ, իսկ քերդն այժմ Ղէչաղէչ, երկուսն էլ սեփականութիւն են պետական գանձարանի:

17. Նոյն Մահևանը նուիրել է մի տուն և մի այգի Առփայ գիւղում: Վերջինս սեփականութիւն է Զուռայի Հասանալի Սուլթանի:

18. Ախթամարեան, որ քնակւում էր Առփայ գիւղում, նուիրել է իւր այգին նոյն գիւղում. այժմ, ինչպէս յիշեցի, գիւղը պատկանում է Հասանալի Սուլթանին:

19. Նորա եղբօրորդին, Ամիրայ Ախթամարեան, նուիրել է նոյն Առփայում մի այգի (1291 թուին) որը գնել էր Տարսայիճ իշխանից 4000 դրամով:

20. Սահիանոս եպիսկոպոս Օրբելեանը 2500 դրամով գնում է Առփայում ձախոփ տալի այգին նոյն Նորաւանքին նուէր:

21. Ուրիշները տուել են Առփայում կամրջախելի մօտ մի այգի, երկու այլ ջրատոյ կամրջի մօտ և մի այգի:

22. Տարսայիճի ամուսին Մինոյ խաթունն և իւր որդի Զալալը, 1291 թուին, նուիրել են երկու այգի. մինը Վէդի գիւղում, միւսը Կորգոյում: Վերջին այգեհեղի տարածութիւնը տասներկու գրվանք էր: Առաջին գիւղն, երևանի գաւառում, այժմ սեփականութիւն է պետական գանձարանի, իսկ երկրորդը անյայտ:

23. Սահիանոս եպիսկոպոս Օրբելեան գնել է իւր եղբայր Զալալից Զուռայ գիւղը 21,000 դրամով և իւր ամէն ծախմանեներով, հողով, ջրով և այգեստաններով և քոլոր քնակիչներով, ամէն հարկերից ազատ, նուիրել է Նորաւանքին: Զուռայ գիւղն, ինչպէս վերը մի քանի անգամ յիշուած է, ամբողջովին պատկանում է մաւզոլեական իրաւունքով իւր քնակիչ

Հասանալի Սուլթանին։

24. Տարսայիճ իշխանը կառուցանելով իւր եղբօր Սմբատի գերեզմանի վերայ դամբարան, յատկացրել է վերջինին Հալէձոր գիւղի տարեկան հարկը ֆլնաաե ապխակ։ Հալէձորն Արցախի սահմանումն է, ուստի չգիտեմ ումմ սեփականութիւն է։

25 Սահմանման եպիսկոպոս Օրբելեանը նուիրել է «սուրբ Սահակ» փողահանքում և Աբասաշէն գիւղը։ Վերջին գիւղն և տեղն այժմ անյայտ են։ Իսկ Փողահանքն այժմեան Գիւմիւշխանայ գիւղն է, որ պատկանում է պետութեանը։

26. Նոյնը նուիրել է իւր հայրենաբաժնից Հրաուկայ բերդի ֆրկոփելէֆնէքն իւր սահմաններով։ Բերդն իւր սահմաններով պատկանում է Զուռաբի Հասանալի Սուլթանին։

27. Նոյն սրբազանը նուիրել է Նորավանքին Արատես գիւղն իւր շրջակայ սահմաններով և վանքով։ Գիւղն, որ այժմ կոչվում է Այտասի (գլ. Լէ) սեփականութիւն է պետական գանձարանին։

28. Նոյնը նուիրել է Քարկոփը բոլոր սահմաններով, որ և պատկանում է պետութեանը։

29. Ումն Տանկրազուէի որդի Սանջար 1303 թուին նուիրել է Տանձիկ գիւղն իւր սահմաններով։ Նոյնանուն գիւղն այժմ պատկանում է Հասանալի Սուլթանին։

30. Նոյն Սանջարը նուիրել է Լմմ այգի նոյն գիւղում։

31. Դուխենց Գրիգոր իշխանը, 1312 թուին, գնել և նուիրել է երկու այգի Դայէկ, ֆաչէ մօտ՝ Առփայում, որ գնուած էին 1500 սպիտակով։

32. Խալաշահի դուստր Խաթունը 300 սպիտակով գնել է Առփայում մի այգի և նուիրել է նոյն Նորավանքի մենաստանին։

33. Խոսրովիկի դուստր Գոնգէն նուիրել է 1294 թուին Խանախահի այգին. այժմ անյայտ տեղ։

34. Ալիսաման Միխիթար քահանայ նուիրել է մի այգի Առփայ գիւղում, Դայեկայ քարի մօտ։

Տասնեչորս երրորդ գարուս սկզբից (1312 թ.) յետոյ ինչ

նուէրներ են եղած մենաստանին՝ յայտնի չէ. միայն պարսից Ֆաթալի շահի օրով Ամաղու գիւղը Պետրոս բէգ Օրբելեանի սեփականութիւնն էր մենաստանով հանդերձ և բոլոր եկամուտը յատկացուած էր Նորավանքի մենաստանին: Այժմ այդ գիւղն և մենաստանի աւերակները պատկանում են, ինչպէս վերը յիշեցինք, Երևանաբնակ Սահակ Եղիազարեանցի ժառանգներին:

Ի բաց առած այս վերջին գիւղը, որ նուիրուած է մեզ մօտիկ ժամանակներում, Նորավանքի մենաստանը, ինչպէս երևում է նորա պատմութեան և արձանագրութեանց մեզ ուանդած կալուածների վերոյիշեալ ցուցակից, ունեցել է ԺԲ և ԺԳ դարերում պատնէշ+ գիւղ, +պատնէշ+ այգի, վէց հողաբաժին, էկո-ուն, մի ջրաղաց երկու աչքով, գիւղի Ջ ընդ և մի քարահանք: Իւր ժամանակին ոսքա կազմում էին պատկառելի հարստութիւն:

Վանքապատկան գիւղերը մենաստանի հետ ի՞նչպիսի յարաբերութիւն ունէին, բերքերի քանի՞ մասն էին յատկացնում եկեղեցուն և հետևաբար Նորավանքի մենաստանի տարեկան կալուածական մուտքն ո՞րպիսի քանակութիւն էր կազմում: Պարսից պետական կանոններին համաձայն և այժմ Ուռատց օրէնքով վերահաստատուած իլատանց հիման վերայ մուլքագրը (կալուածատէր) իւր մուլքի մէջ բնակուող գիւղացիներից ստանում է ամէն տեսակ հողային բերքերի տարեկան ըրա էչո-նէրդ (1/30) մասն կամ տասանորդից փոքր ինչ աւելի: Արգեօք նոյն էր տուրքերի քանակութիւնն և ԺԲ—ԺԳ դարերում:

Մենաստանի կալուածոց մէջ բնակուող ժողովուրդը, բացի իւր աշխատանաց մի մաս յատկացնելուց յօգուտ եկեղեցու, կրո՞ւմ էր արգեօք որ և է պարտականութիւն: Դարալագեազի վանքերի բոլոր արձանագրութեանց մէջ, ինչպէս յիշել եմ ես գլխում, միայն էչո- գիւղի մասին է տեսնում թէ նուիրեցի ե-ըվ ֆաղավէրով (Զակօշ գիւղն) կամ այգեպահօ+ և ընդ ընակէ+ (Զուտայ գիւղն, որ Սահմանոս եպիսկոպոս Օրբելեանը ընծայեց

Նորավանքի եկեղեցուն)։ Մնացեալ արձանագրութեանց մէջ ժողովրդի մասին ամենևին չէ յիշուած։

Նորավանքի մենաստանը, բացի վերն ատած անշարժ կալուածներն, անշուշտ կունենար և այլ շատ այգ-պիսիներն, որոնք չեն եղել յիշատակուած որ և է տեղ։ Ուրեմն բոլորը միասին, անշուշտ, կկազմէին նշանաւոր եկամուտ։ Մենաստանն իբրև ուխտատեղի, կունենար և մանաւոր մուտք, նուէրներ։ Իբրև նախաթոռ՝ կունենար օգուտ և թեմից, չէ որ նորան էին պատկանում Վայոց ձոր, Ձահուկ և Նախիջևան գաւառները։

Իբրև նախաթոռ, իբրև հարուստ մենաստան, Նորավանքը կունենար և բազմաթիւ միաբանութիւն, որի ապրուստը պակաս ծախս չէր կլանիլ։ Ասիտոս որ միաբանաց թուի, եկամտից և ծախուց մեծաւոր քանակու թեանց մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։ Բայց այսքանը յայտնի է, որ այն պարերում շատ հիշատ էր բազմաթիւ կրօնաւորներ ժողովել։ Օրինակ՝ ամն վահան, կրօնաւոր գառնալով, մենաստան շինեց Բաղաբերդի մօտ, ուր և ժողովեց աւելի քան հարիւր կրօնաւոր եղբայրներ*)։ Կամ Տաթևի վանքում, 906 թուականին, կային հինգ հարիւր չափ կրօնաւոր, երաշխաւոր երգերի բազմաթիւ փիլիսոփաներ, գրողների և նկարչութեան արհեստաւորներ. Ոմն էր և վարդապետական կրթութեան վարժարանը, պնդում է Սահակ Սպիսկոպոս Օրբելեանը*)։

Մորանով չէ վերջանում Նորավանքի պատմութիւնը։ Սահակ Սպիսկոպոս Օրբելեանից մինչև մեր օրերը թէ ինչ վիճակի է հնթարկուում այդ որբավայրը, մենք կտեսնենք հետևեալ գլխում։

(Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

---

*) Օրբել. Պատմ. Նահ. Սիս. գլ. ԽԱ. և ԽԵ.

ԳԵՐԶԳԱՅԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ.

Յայտնի է՝ թէ լուսատու մարմինն, որը ծագում է մի որոշ հեռաւորութեան վերայ դիտողից, վերջինիս տեսնւում է ոչ այն վայրկենում երբ նա ծագում է և սկսում է լոյս տալ, այլ թէ հարկաւոր է մի քանի՝ թէև շատ քիչ՝ ժամանակ, որպէս զի այդ մարմինը աչքով ըմբռնելու կարևոր լոյսը անցնէր՝ նրան դիտողի աչքից անջատող հեռաւորութիւնը։

Արագութիւնն, որով լոյսն անցնում է տարածութիւնը, այնքան մեծ է, որ այն աննշան հեռաւորութիւններով, որոնք բաժանում են երկրիս վրայ գտնուած տարբեր մէկտեղից, հազիւ թէ կարելի լինէր պարզել՝ թէ պէտք է մի փոքր ժամանակ, որ լոյսը հասնէր մեր աչքին, և թէ աւելի քիչ կարելի էր մտածել այս ժամանակի չափելու վրայ։ Բայց որովհետև մենք տեսնում ենք մարմիններն աւելի մեծ հեռաւորութիւնների վրայ, քան երկրի չափերը (այսինքն երկնային մարմինները), աստղաբաշխները կարող եղան արամիտ կշռադատութիւնների միջնորդութեամբ չափել լուսոյ արագութիւնը, որից յայտնուեցաւ՝ թէ լոյսը անցնում է մի վայրկենում մօտ 300000 քիլօմեթր (քիլօմեթրը մէկ վերստից 26 տաժենով պակաս է)։

Այս թիւը ճիշդ է ոչ բոլորովին, սակայն որովհետև բանը միայն ընդհանուր հայեացքներ հաստատելումն է, որոնց համար թուերի մաթեմատիկական ճշտութիւնն էականապէս կարևոր չէ, մենք մեր յաջորդ դատողութիւններում կշարունակենք բաւականանալ մօտաւոր բոլորակ թուերով։

Լոյսը անցնում է 300 հազար քիլօմեթրը երեքի մէջ մի վայրկենի ընթացքում։ Որովհետև լուսինը միջանից հեռու է 380 հազար քիլօմեթր, այստեղից հետևում է՝ թէ երբ լուսնի շրջանակի նեղ շերտը աւելին անգամ երևում է մութ հորիզոնի վրայ, պէտք է անցնի գեթ $^3/_4$ վայրկեան՝ յառաջ քան մենք նրան կտեսնէինք, որովհետև լոյսը հարկաւորութիւն ունի $^3/_4$ վայրկենի լուսնից մեր աչքին հասնելու համար։ Եւ այսպէս (երբ

ուշագրաւթեան չառնենք ճառագայթներուն բեկումն) իրապէս լուսինը մեր հորիզոնի վրայ ծագում է $^5/_4$ վայրկեանով վաղ քան մենք նորան տեսնում ենք։

Արեգակը գտնուում է 150 միլիոն քիլօմեթր հեռաւորութեան վրայ, 400 անգամ աւելի հեռու է քան լուսինը. ուստի լոյսը հորիզոնաւորութիւն ունի 400 անգամ աւելի ժամանակի երկրին հասնելու համար, այսինքն 400 անգամ $^5/_4$ վայրկեան։ Ուստի այն վայրկենից երբ արեգակը ծագում է, այսինքն երբ արևի շրջանակի եզերային առաջին ճառագայթը մտնում է մեր հորիզոնը, անց է կենում 400 անգամ $^5/_4$ վայրկեան, կամ մօտ ութ րոպէ ու կէս, մինչև որ այդ ճառագայթը կը հասնի մեր աչքին։ Եւ այսպէս արեգակը ծագում է իրապէս ութ ու կէս րոպէ առաջ, քան մենք տեսնում ենք նորա ծագումը։

Լուսնթագ մոլորակը, իր աւելնաւոր հեռակայութեան ժամանակ, մեզանից 930 միլիոն քիլօմեթր հեռու է լինում։ Այս հեռաւորութիւնն աւելի քան վեց անգամ մեծ է արեգակի երկրից ունեցած հեռաւորութիւնից։ Ուստի լոյսը հասնում է Լուսնթագից մեզ՝ 52 րոպէում։

Ուրանոս մոլորակը իր մեծակ ճանապարհը կտրում է գրեթէ 3 միլիարդ քիլօմեթր հեռաւորութեան վրայ մեզանից։ Լոյսը ճանապարհորդում է տարածութեան մէջ երկու ժամ, յառաջ քան թէ նա Ուրանոսից հասնէր երկրին, այնպէս որ յառաջ քան թէ մենք տեսնենք Ուրանոսը ծագելիս, նա արդէն երկու ժամ գտնուում է մեր հորիզոնի վրայ։

Ուրանոսը համարուում էր մեր արեգակնային համակարգութեան վերջին մոլորակը, մինչև Պիսիդոնի գտնուիլը. շնորհիւ Էվէրիէի սրամիտ հաշիւներին և Հալլէի աստղալից երկընքին ճիշդ համաձայնելուն։

Սրանից զէնը հետևում են հեռաւոր տարածութիւններ, որ անջատում են մեր արեգակնային համակարգութիւնը «անշարժ» աստղերից։

Դեռ շատ ժամանակ չէ, որ անշարժ աստղերի հեռաւորու-

թեան վրայ դրականապէս ոչինչ յայտնի չէր, երբ Սարուվէի և Բէսսէլի հետազօտութիւնները ամենանշանաւոր հետևութիւնների հասցրին։ Այժմ մենք գիտենք՝ թէ մեզանից ամենամերձ աստղը, կենտաւրոս աստեղատան պայծառ աստղը, գտնուում է մեզանից մօտ 30 բիլլիոն քիլօմեթր հեռաւորութեան վրայ։ Սորա լուսի ճառագայթը հասնում է մեզ մօտաւորապէս երեք տարուայ մէջ։ Այս նշանակում է, որ ներկայումս մեր աչքին երևացող նորա լոյսը, այժմ չէ գտնւում աստղից, այլ թողել է նորան արդէն երեք տարի առաջ։

Գնաը աստեղատան Վ.էգա անունով յայտնի պայծառ աստղի համար Սարուվէն հաշուել է՝ թէ լոյսը մեզ հասնելու համար կուզի 12 տարի և մի ամիս. Գարգինգի չափումներից և ամենանոր աստղաբաշխերի հետազօտութիւններից երևում է՝ թէ անշարժ աստղերի միջին հեռաւորութիւնների համար մօտաւորապէս ստացուում են հետևեալ թուերը։

Լոյսը հասնում է մեզ

Առաջին մեծութեան աստղից	3—12	տարուայ	ընթացքում.
Երկրորդ	»	»	20	»	»
Երրորդ	»	»	30	»	»
Չորրորդ	»	»	45	»	»
Հինգերորդ	»	»	66	»	»
Վեցերորդ	»	»	96	»	»
Եօթներորդ	»	»	180	»	»

Սարուվէն նոյնպէս գտնում է իւր հետազնոսական չափից, և հիմնուելով այն վստահի վրայ՝ թէ 12-րդ մեծութեան աստղը այսպիսի ղօրաւոր հետազնոսակով դիտողին ներկայանում է նոյնչափ պայծառ, որչափ վեցերորդ մեծութեան աստղը չզինուած աչքի համար—թէ 12-րդ մեծութեան աստղը 41 անգամ հեռու է վեցերորդ մեծութեան աստղից, և ուրեմն այս ամենափոքր նրանից տեսանելի աստղերը գտնուում են մեզանից 35 հազար բիլլիոն քիլօմեթր հեռաւորութեան վրայ, կամ թէ այնպիսի հեռաւորութեան վրայ, որից լոյսը հասնում

է մեզ 4000 տարուայ ընթացքում: Ա յս նշանակում է՝ թէ երբ 12-րդ մեծութեան աստղի լուսոյ ճառագայթը հասնում է մեր աչքին, նա թողել է իւր աղբիւրը արդէն 4000 տարի որանից առաջ, և թէ այս 4000 տարուայ ընթացքում նա թափառում էր իւր ուղղագիծ ճանապարհով, մինչև մեր աչքին կհասնէր:

Մեծանուն Հէրշէլը՝ աւելից առաջ ենթադրութիւն յայտնեց մեր աստղային համակարգութեան արտաքին ձևի մասին, ենթադրութիւն, որի յետագայ զարգացումին սատար եղան աւելացուր աստղաբաշխներն, և մանաւանդ Մէդլէրը: Ա յս ենթադրութիւնով ամբողջ աստղային համակարգութիւնն է, եթէ կարելի է այսպէս ասել, ոսպաձև երկինք. այսինքն մեր արեգակի հետ գտնուումենք գրեթէ այն տարածութեան միջավայրում, որը լիքն է աստղերով և ունի այնպիսի ձև, ինչպիսին ներկայացնում են երկու ժամացուցի գոգաւոր երեսով իրար դարձած ապակիները: Ա յս բոլոր տարածութիւնը լիքն է գրեթէ հաւասարապէս աստղերով, և որովհետև մենք գտնուում ենք մօտ նրա այն եզրներին, որոնք մեզանից վերևը ու ներքևն են, քան այն եզրներին որոնք համապատասխանում են ոսպի շրջանակին. ուստի և այսպէս ասած՝ մեր գլխի վերևը գտնուող աստղերի հեռաւորութիւնները մեզ ընդարձակ են թուում, մինչդեռ ոսպի շրջանակի մօտ տեղաւորուած աստղերը մեզ թուում են իրր մեծ քանակութիւնով կուտակուած: Ա յս համակարգութեան եղրը ներկայանում է մեզ իրր ծիր կաթին կամ յարդգողի հետքը (դարմանագողի ճանապարհը), ուր մեզանից շատ հեռաւոր աստղերը թուում են մեզ այնպէս սղմուած, որ նոցա լոյսը ձուլուում է մի սպիտակախառն ամպի մէջ, և չի կարելի արդէն զանազանել առանձին աստղերը:

Սակայն այս սիեղերական ոսպը՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ միայնակը չէ. Հէրշէլը կարծում է՝ թէ ձուաձև ամպանման բիծերը ինքնուրոյն աստղային համակարգութիւններ են, որոնք գտնուում են մեզանից այնչափ հեռու, որ նրանց լոյսը

հանդում է երկրին միլլիոնաւոր տարիների ընթացքում:

Մեր նպատակի համար բաւական է կանգնել 12-րդ մեծութեան աստղերի վրայ, որոնցից սրգէն լոյսը մեզ հասնելու համար 4000 տարի թափառագնաց է լինում: Առաջնեբրից սրգէն պարզ երևում է՝ թէ մենք իւրաքանչիւր աստղ տեսնում ենք ոչ այնպէս, ինչպէս նա այժմ կայ, այլ այնպէս, ինչպէս նա էր այն ժամանակում, երբ լուսոյ ճառագայթը թողեց նրան:

Կենտաւրոսի աստղը մենք տեսնում ենք, ուրեմն, այնպէս, ինչպէս նա էր սրանից երեք տարի առաջ. Վէգան տեսնում ենք 12 տարի և մի ամիս առաջ, մինչդեռ 12-րդ մեծութեան աստղերը մենք տեսնում ենք այնպէս, ինչպէս նրանք էին 4000 տարի սրանից առաջ:

Այստեղից հետևում է և այն գրութիւնը, որ սրգէն յայտնած են շատ անգամ աստղաբաշխները և որ սրգէն հանրածանօթ փաստ է դարձել, թէ 12-րդ մեծութեան աստղը կարող էր հանդչել 4000 տարի սրանից առաջ, և մենք շարունակ դեռ տեսնում ենք նրան:

Այդ դատողութիւնը գործադրելով առանձին լուսատուների վերաբերութեամբ, մենք կարող ենք ասել՝

Լուսինը մենք տեսնում ենք ոչ այնպէս, ինչպէս նա այժմ է, այլ այնպէս, ինչպէս նա էր 3/4 վայրկեան սրանից առաջ, այսինքն լուսինը կարող էր սրգէն մի վայրկենից աւելի առաջ փշուր փշուր լինել և մենք դեռ էս նրան կտեսնէինք այս վայրկենի ընթացքում:

Արեգակը մենք տեսնում ենք ոչ այնպէս, ինչպէս նա է ներկայումս, այլ այնպէս, ինչպէս նա էր ութ ու կէս րոպէ սրանից առաջ, Լուսնթագը — 52 րոպէ, Ուրանոսը տեսնում ենք այնպէս, ինչպէս նա աւելի քան երկու ժամ սրանից առաջ էր, Կենտաւրոսի աստղը — ինչպէս երեք տարի սրանից առաջ էր, Վէգան — 12 տարի, վերջապէս 12 մեծութեան աստղը — 4000 տարի սրանից առաջ էին:

Այս դրութիւնները հին են, գտնուում են բոլոր հանրա-

հասկանալի աստղաբաշխական ձեռնարկներում, և յայտնի են գործողում կարգացոլ տղայոց ու աղջկերանց էլ: Սակայն զարմանալի է, որ ոչ ոք գլխի չի ընկել շուռ տալ այս գլուխ-թիւններն և մակաբերել այն հիմնապատճառ հետևութիւններն, որոնք ստացուում են այս գործնական թիւնից: Այս հետևութիւններն և այն եզրակացութիւնները, որոնց հասցնում են նրանք, մենք ուզում ենք այժմ փորձանել մեկնելու:

Ինչպես մենք արդէն ասացինք, մենք տեսնում ենք լուսնի շրջանակը ներկայ րոպէում ոչ այնպես, ինչպես նա է այժմ, այլ ինչպես նա էր $^3/_4$ վայրկեանով դիտելու վայրկենից առաջ:

Սոյնպես և լուսնի վրայ գտնուող երևակայած դիտողը, տեսնում է երկիրս ոչ այնպես, ինչպես նա է այս վայրկենում, այլ այնպես, ինչպես նա էր $^3/_4$ վայրկեան առաջ:

Ով ներկայ րոպէում արեգակից կդիտէր երկիրը, նա կտեսնէր սրան ոչ այնպես, ինչպես է, այլ այնպես, ինչպես ութ ու կէս րոպէ առաջ էր: Ուրանոսի համար դիտողութեան և իրական փաստի մէջ եղած ժամանակը հասնում է մինչև $2^1/_2$ ժամի. այնպես որ, եթէ օրինակի համար մի առաւօտ Ալպեան գագաթները լուսաւորուում են արեգակի առաջին ճառագայթով ժամը վեցին, Ուրանոսի վերայից դիտողը բաւականացած սուր տեսողութիւն և զօրաւոր հեռադիտակ ունենալով կտեսնի այս արևը ելնելու նշանը միայն ութ և կէսին:

Կենտորոսի վրայից դիտողը չէ տեսնում մեր երկրի հիւսիսային կիսագունդը, որովհետև այս աստղը երբէք չէ բարձրանում մեր Յորիզոնի վրայ. սակայն ենթադրենք թէ այս կարելի է. այն ժամանակ եթէ այս աստղի վրայ լինէր մի դիտող և այնչափ սուր դիտողութիւն ունենար, որ նա կարող լինէր զանազանել մեր թոյլ լուսաւորուած աստղի մանրամասնութիւններն, աստղի՝ որ ուրիշից ստացած լուսով է լոյս տալիս. այսպիսի դիտողը կարող էր 1873 թուին տեսնել Ֆրանսիայում 70 թուի պատերազմը, թէև սա արդէն վաղուց գադարած էր այնտեղ: Վէգայի վրայ քնակուող դիտողը այժմ տեսնում է այն, ինչ որ երկրի վրայ կատարուում էր տասնեկու տարի

սրանից առաջ և այլն։ Մինչդեռ 12-րդ մեծութեան աստղերի վրայից դիտողը այժմ տեսնում է երկիրը այնպէս, ինչպէս սա էր 4000 տարի սրանից առաջ՝ երբ հիմնուած է եղել Մեմֆիսը, և Աբրահամը թափառում էր երկրի վրայ, եթէ միայն ի հարկէ՝ երևակայական այդ դիտողն ունի տեսողութիւն, որը շատ գերազանցում է մարդու երկրաւոր անկատար տեսողութիւնը։

Աստղերի թուի անհունութեան պատճառով, որոնք ցրուած են տարածութեան մէջ՝ 30 բիլլիօն քիլօմեթրի և 35 հազար բիլլիօն քիլօմեթրի միջավայրում, որքան տարուայ համար որ ուզես՝ հաշուելով տարիները սրանից առաջ, կարելի է գտնել մի որ և իցէ աստղ, որի վրայից իսկ և իսկ ներկայ ժամանակում տեսնում է մի որ և է երկրի վրայ անցեալ վայրկեան կամ՝ գոնեայ՝ երկար չպէտք է սպասել, որ այդ աստղի վրայ գտնուող դիտողի համար այդ վայրկեանը ժամեներ։

Բ.

Այժմ կանգ առնենք մի վայրկեան վերևը հաստատած ճշմարտութիւններից դուրս եկող հետևանքներից մէկը մակաբերելու համար։

Երևակայենք մի էակ՝ լիապէս մարդկային յատկութիւններով և մարդկային տեսողութիւնով՝ միայն աւելի կատարեալ, մեզ հասկանալի կլինի թէ նա կարող է ունենալ ընդունակութիւն և կարողութիւն տեսնելու ու շրջահայելու մի տեղից ամենափոքր ժամանակութիւններով այն աւեները, ինչ որ միայն կարելի է տեսնել այդ կէտից։

Այժմ՝ եթէ մենք ուզում ենք ակներև պատկերացնել մեզ՝ թէ ինչպէս այս էակի առաջ կարող է բացուիլ մի որ և է իրողութիւն կամ անցք, որ կատարուած էր՝ թէ կուզ՝ հազար տարի առաջ, կարծես թէ այդ անցքը կատարուում է այժմ նրա՝ այսպէս ասած՝ մարմնեղէն աչքերի առաջ, և այս նպատակի համար բաւական է երևակայել՝ թէ այս էակը ներկայ ժամանակումս գտնուում է տարածութեան այնպիսի կէտում, որին՝ հէնց ներկայ ժամանակում՝ հասնում է այս կատար-

ուած իրողութեան նկարը բերող լոյսը:

Եթէ մենք խորը մտածենք այս հետևանքի վրայ, կտեսնենք թէ ամենապնդությունը անչափելի չէրպէս-ընդհատ հաստատ է ըստ պարզությունան ամեն պէղ ներկայ չինելու: Որովհետև՝ եթէ մենք երևակայենք՝ թէ մեր ենթադրած ամենատարած էակի աչքը գտնուում է տարածութեան ամեն կէտում, նրա մօտ գալիս է միաժամանակ և միանուագ ամբողջ տիեզերական պատմութեան նկարը:

Արեգակի վրայ՝ իրապէս և պայծառ՝ նրա աչքերի առաջ պարզուում է այն պատկերն, որը էր երկրի վրայ ուէթ ու կէս րոպէ առաջ:

12-րդ մեծութեան աստղի վրայ նրա առաջ երևան են գալիս 4000 տարի սրանից առաջ եղած անցքերն, իսկ պարզ-ընդհատ մէջաւոր կէտերում նրա առաջ ընկած են քառանասնի միջոցական վայրկեանների անցքերի պատկերները:

Այսպիսով ժամանակի ու տարածութեան ընդարձակութիւնը մենք բերինք այնքան մօտ առընչակցութեան դէպի զգայական ըմբռնողութիւնն, որ արդէն չէ կարելի զանազանել ժամանակի ու տարածութեան հասկացողութիւնը միմեանցից. այն՝ ինչ որ յաջորդական է քառանասնի մէջ՝ միաժամանակ գտնուում է որոշ յաջորդ-ընդհատ պարզ-ընդհատ մէջ: Պատճառի գործողութիւնն իբրանից ուշ չէ երևան գալիս, այլ տարածութեան մէջ է գտնուում նրա հետ միասին, և մեր աչքի առաջ բացուում է մի պատկեր, որ պարփակում է միանուագ ժամանակն էլ, տարածութիւնն էլ, և որ պատկերացնում է նրանց միասին այնպէս, որ մենք արդէն չենք կարողանում անջատել ժամանակի մէջ եղած ընդարձակութիւնը տարածութեան մէջ եղածից:

Ամենագիտութիւնը անցեալի վերաբերութեամբ գառնում է մեղ հասկանալի՝ իբրև ամբողջ տարածութեան միաժամանակ զգացումն: Անցեալ հազարամեակների պատկերը կգտնուէր ներկայ ժամանակում՝ տարածութեան մէջ անփոփոխ կերպով՝ տեսողութեան անչափ կարողութիւնով օժտուած աչքի առաջ. և հասարակ ընդհանրացնելովը, և մարդկային յատկութեան

վերին աստիճանի սատակացնելովը, մենք մօտենում ենք բացարձակ ու անսահման իմացականութեան յատկութիւններից մէկին՝ իբրև մի փիլիսոփայական կարծիքական դրութեան։

Գ.

Յետագայ բացատրութեան մէջ մեզ սպէք կհանդիպի գործածել «կարելի» ու «անկարելի» դարձուածները մենք սակայն պէտք է պայմանաւորենք ընթերցողի հետ այս բառերի նշանակութեան մասին։

Մենք անուանում ենք «կարելի» այն, ինչ որ չէ հակառում մտքի օրէնքներին, և անկարելի այն, ինչ որ հակառում է այս օրէնքներին։

Ուստի՝ կարելի է մի որ և է մարդկային հնարագիտութեան ամենայն վախճանական կատարելագործութիւնը. անկարելի է այնպիսի նպատակի հասնելը, որը պահանջում է (մերևը որոշուած մոքով) միջոցներ։

Օրինակ կարելի է որ և է ուզած վախճանաւոր ընդարձակութիւնն անցնելը, սրչափ քիչ ժամանակում որ ուզես։ Որովհետև ինչպէս շոգեկառքը կարող է անցնել մի րոպէում մի քիլօմեթրից աւելի, իսկ երկաթուղագնիացական հեռագիրը կարողութիւն է տալիս մի վայրկենից պակաս ժամանակում շարժել շատ մեծ հեռաւորութեան վրայ գտնուող ղանգակը, այսպէս էլ պէտք է կարելի համարել և այսպիսի ենթադրութիւն՝ զորօրինակ թէ մենք կարող ենք տարածութեան մէջ շարժուել լուսոյ արագութիւնը շատ գերազանցող արագութիւնով։

Ինքն իրան յայտնի է՝ թէ գործնականապէս այս հեռանքը անհասանելի է։ Սակայն մեզ համար նշանաւոր է միայն, որ ընթերցողը համաձայնի հետևեալ դրութիւնների հետ։

Եթէ մի որ և է փաստի համար, որ մենք կարող ենք երևակայել միայն երազում կամ վանատաստիկական ցնորքներում, ապացուցած կլինի՝ թէ նրան իրականացնելու համար չկայ միայն կարողութիւն յաղթելու մի քանի արգելքներ՝ արգէն ունեցած գործիքների անբաւարար կատարելութեան պատճառով,

կամ մի տեսից միւս տեղը բաւարար ապացուցութիւնով տեղափոխուելու անկարելիութեան պատճառով, և երբ միայն այս ապացուցութիւնը հանուած լինի, հարցը արդէն երազների ու ֆանտազիաների շրջանից անցնում է կարելիութեան շրջանը, որը՝ ինչպէս մենք վերևը որոշեցինք՝ է այն, ինչ որ չէ հակաճառում իմացականութեան օրէնքներին:

Օրինակ՝ հարկաւոր է ֆանտազիաների ու հեքիաթների շրջանին յատկացնել այն հարցը, թէ կայ երկրի կենդրոնում փիւնիկ թռչունը:

Սակայն՝ եթէ ենթադրենք՝ թէ մենք կարող ենք ապացուցանել, թէ իրապէս կայ այդպիսի թռչուն, որ կենում է երկրի կենդրոնում, կամ ովկիանոսի յատակում, և եթէ մեր ապացուցութիւնը լիապէս ճիշդ, պայծառ ու անհերքելի լինէր, չնայելով այս թռչունը տեսնելու անկարելիութեանը, որի մէջ թերևս մենք կմնանք, բայց և այնպէս մենք արդէն պայծառ ու ակներև կզգայինք՝ թէ արգելքներ կան, որ խանգարում են մեզ նրան տեսնել, և այս արգելքների հեռացնելը կարելի կդառնար մի որ և է մանաւոր մեքենական յարմարացութեան միջնորդութիւնով:

Ուստի՝ հէնց որ մի իրողութիւն երազների, ցնորքների ու ֆանտազիաների շրջանից անցնում է այնպիսի դրութեան, որ իր գոյութեան համար մենք պէտք է հեռացնենք սոսկ մեքենական կամ տարածութենական յատկութիւն ունեցող արգելքներ, որանով իսկ հարցը մնում է մի այլ շրջանի մէջ, որին մենք «կարելի» անուն ենք տալիս:

Սակայն՝ չէ հարկաւոր խառնել կարելիութեան հասկացողութիւնը գործնականապէս իրականացնելու մտադրակերի հետ, և չէ հարկաւոր կարծել՝ թէ կարելիութիւնը կարող է յառաջացնել գործնական կատարելիութիւն. մեզ համար նշանաւոր է մի քանի դրութիւնների կարելիութիւնը նրանով միայն, որ սա տեղափոխում է այս դրութիւնները քնածին մշուշապատ ֆանտազիաների շրջանից շօշափելի մտադրակերների շրջանը:

Եւ այսպէս պայման դնելով «կարելի» բառի գործադրու-

թեան մասին, մենք՝ մի կողմից՝ չենք կարող գործադրել նրան ֆանտաստիկական պատկերների համար՝ միւս կողմից՝ չպէտք է նրան սահմանափակենք գործնական իրականացումով։ Ուստի՝ մենք մեր սահմանողութեան համաձայն, կարող ենք ասել կարելի, այսինքն չհակաճառող մտքի օրէնքներին, այն, թէ մարդ կարող էր հասնել որ աստղին որ ուզես, որչափ կարճ ժամանակում՝ որ ուզես, և թէ նա ունենար բնդ ամին մի հեռադիտակ այնչափ թափանցող զօրութեամբ, որ ոչ մի տարածութեան չնայելով՝ նա կարելիութիւն ունի զանազանելու առարկաների ամենափոքր մանրամասնութիւնները։ Այսպէս ենթադրելով, ստացւում է կարելիութիւն դուրս կանչել ինչ պատմական վայրկեանի իսկական ու ճշմարիտ պատկերը որ ուզենաս՝ նիւթական աչքերով անմիջապէս նրան դիտելու համար։

Օրինակ՝ ասենք թէ՝ ուզում ենք Լուտերին տեսնել Վօրմսում պետական ժողովի առաջ. այն ժամանակ մենք պէտք է արագ վոխադրուենք այնպիսի աստղի վրայ, որից լոյսը հասնում է մեզ աւելի քան երեք հարիւր տարուայ ընթացքում. այն ժամանակ՝ լինելով այդ աստղի վրայ՝ մենք երկիրը կտեսնենք այնպէս և այն մարդկանցով ու անցքերով իսկ, ինչպէս նա էր կրօնական յեղանորոգութեան ժամանակ։

Այսպիսով կարելի է դուրս կանչել՝ ինչ անցած վայրկեանի պատկեր որ ուզենաս՝ ամենահոլին հնութիւններից մինչև մեր ժամանակը։

Իբրև անքակտելի ու անկաշառելի հնադարան, որի բովանդակութիւնը է ինքը՝ զուտ, անմիջական ճշմարտութիւնը, այնպէս և տիեզերքի տարածութիւնը բովանդակում է ամբողջ անցած գնացածի պատկերը։ Ու ինչպէս ձայնը ծաւալւում է օդի մէջ իբրև ալիքը ալիքի հետևից. ինչպէս զանգակի ու թնդանօթի մռնիկ կանգնողին, լսելի են լինում մեկի զողանջիլը միւսի հրետելը միաժամանակ լեզուակի հարուածի ու վառօդի պայթոցի հետ, իսկ ամէն մեկ հեռու կանգնողին ձայնը գալիս է լուսից ուշ, կամ նաև՝ հեռաւորութեան աւելանալովը՝ բոլո-

բովին անհետանում է մարդկային ականջի համար, կամ թէ ինչպէս որոտի դղրդոցը կամ կայծակի փայլը, որ իրապէս միաժամանակ են ծնւում, միանգամից տեսանելի ու լսելի չեն լինում, և երբեմն որոտի ձայնը հասնում է ականջին միայն մի քանի րոպէ անցնելուց յետոյ, երբ լոյսը հասել է արդէն աչքին. — կատարելապէս այս եղանակով, ինչպէս մենք դոյդ տուինք, շարժւում են եթերում լուսոյ ճառագայթի տատանումի վերայ փայլուն պատկերները, և թէպէտ նրանք ազօտանում են, նուազում են, բայց էլի պահպանում են գոյնն էլ, ձևն էլ. և որովհետև ամեն բան, որ գոյն ու ձև ունի, տեսանելի է, ուստի և այս պատկերների մասին պէտք է ասել՝ թէ սրանք տեսանելի են, թէպէտև ոչ մի մարդկային աչք չէ կարող որանց տեսնել այն լուսաբանական գործիքների միջնորդութեամբ, որոնք մինչև այժմ մարդս շինել է:

Եւ այսպէս, այս հնադարանը՝ ամբողջ անցած եղածի այս պատմութիւնը՝ կայ տիեզերքի տարածութեան մէջ և շարժւում է հետու և հետու լուսածին եթերի տատանումի հետ, և այս պատմութիւնը կարելի է ճշմարտապէս ու անմիջապէս տեսնել աչքերով, թէև ոչ մարդկային:

Բոլոր գալանի արարքների պատկերները անջնջելի ու անոչնչանալի կերպով թաւիւռում են մի արեգակից դէպի միւս արեգակը: Սպանութեան արիւնածիր հեռքերը մնում են ոչ միայն սենեակի յատակի վերայ, այլ և տիեզերքի տարածութեան մէջ շարժւում է հետու և հետու յանցանքի նկարը:

Այժմ՝ ներկայ րոպէիս՝ աստղերից մէկի վերայ տեսնում է Գասպար Հաուզերի օրօրոցը, որից անյայտ մարդիկ տեղափոխեցին թշուառ երեխային մի սենեակ, ուր նրանք պահեցին նրան ինչպէս գագաղում, շատ տարիների ընթացքում. ներկայ րոպէում՝ մի ուրիշ աստղի վերայ տեսանելի է Կարլոս տատերկուերդոյի սպանողի գինեվարձակութիւնը: Սակայն բաւ են մանուածութիւնները: Ընթերցողի ֆանտազիային ենք թողնում նոր պատկերներ հանճարելն, և անցնում ենք հետևութիւնների յետագայ շարքին, որոնք ուզում էինք մենք դուրս բերել:

(Շարունակելի) Երկ Էբերտի. Թարգմ. Ր. Մ. ԶԱՐԳԱՐԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՈՒԱՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՅ ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ։

Բարեպաշտօն Յովսէփ Պետրոսեան Ալքունչեանց ի Թէոդոսիայ քաղաքէ նուիրեաց ի նպաստ վերանորոգութեան Մայր
Տաճարի Սրբոյ Էջմիածնի 500

Գեղերու- գի-ղ	ր·	կ·
Հասարակութիւն Գեչերլու գեղջ	25	
Տանուտէր Յակովբ Յարութիւնեան	1	
Ստեփան Մարգարեան Ահարոնեանց	1	
Միքայէլ Թարոյեան Բաղդասարեանց		20
Յարութիւն Մանուկեան Սարգսեան	1	
Յարութիւն Մ. Ահարոնեանց	1	
Սեդրակ Գ. Մելիք Խաչատուրեանց		50
Արշակ Աւետեան		20
Կարապետ Մարգարեան		40
Ստեփան Ահարոնեան		50
Կին Ստեփան Մարգարեանի		35
Քեօրփալեցի Հայրապետ Բաբաջանեան		20
Սահակ Նազարեան		20
Առաքել Օհանեան		20
Սարգիս Բադալեան		10
Ոմն		10
Գրիգոր Ահարոնեան	1	
Պօղոս Ահարոնեան		20
Պօղոս Դազարեան		40
Յովհաննէս Մամիկոնեան		50
Գումար	34	50

Սարբաբապաբ գի-ղ		
Տանուտէրի օգնական Դաւիթ Մուրադեան . . .	1	
Ստեփան Աւագեան	1	
Սեդրակ Յակովբեան Միրզօեանց	1	

Սարգիս Օհանեան		50
Գալուստ Տէր Յարութիւնեան		50
Դաւիթ Մինասեան		20
Յովհաննէս Գասպարեան	1	
Մադթէ Խաչատուրեան		40
Մկրտիչ Բարաղամեան		25
Հօլօ Մարգարեան Այվազեանց		60
Վարդան Աւետեան		50
Աստուածատուր Մանուկեան	1	
Ղազար Բագալեան		50
Սարգիս Պօղոսեան		20
Գումար	8	95

Մօլլաէյապէէ գի-ղ

Հասարակապետ Պ. Ալէքսան Եղիազարեան	3	
Պ. Մնացական Յովհաննէսեան	1	
Երեցփոխ Սարգիս Ղազարեան	1	
Գասպար Դաւթեան	1	
Յակոբ Յովհաննէսեան	1	
Մարգար Մանուկեան	1	
Եղիգար Մարկոսեան	1	
Սահակ Յարութիւնեան		50
Յովսէփ Տէր Սիմէոնեան	1	
Գումար	10	50

Ղ-ըէ-ը-լէ գ-ղ

Հայրապետ Տէր Յարութիւնեան	2	
Գէորգ Տէր Յարութիւնեան	2	
Մարտիրոս Կարապետեան	1	
Ալէքսանդր Սաքօեան	2	
Գէորգ Սաքօեան	1	
Ննգիբար Մուրադեան	1	
Նախիջևանցի Ռուսաց Տարրական ուսումնարանի ուսուցիչ		
Բագարատ Տէր Գասպարեանց	2	
Գումար	11	
Հասարակութիւն Թափադիպի գեղջ	5	
Հասարակութիւն Ջաւարապատ գեղջ	5	

Ղուկիդիդանցի Նիկողայոս Միրզայեան	1	
Առաքել Հայրապետեան	1	
Աւետիս Թլաթեան		20
Ենոք Մանուկեան		20
Դաւիթ Յակոբեան	1	
Գումար	13	40

Շահրիւր ֆի-ղ

Ի Հասարակութենէ Շահրիարու	10	
Մկրտիչ Գրիգորեան	1	
Վարդան Յարութիւնեան	1	
Տանուտէր Յովհաննէս Խաչատուրեան	1	
Յովակիմ Տէր Անտօնեանց	1	
Մարգար Երմիեանց	1	
Եփրեմ Տէր Ղազարեան	1	
Գումար	16	
Հասարակութիւն Ուզունօբայ գեղջ	5	
Յակոբ Սահակեան	1	
Օհան Աղաջանեան	1	
Մուրադխան Խաչատուրեան	1	
Նազար Ղազարեան	1	
Յակոբ Թումասեան	1	
Դանիէլ Շահվալադեան		50
Խաչատուր Ղազարեան		40
Կարապետ Ղազարեան		30
Տիրուհի Եազրահար Ղազարեան	1	
Հասարակութիւն Մարգարայ գեղջ	3	
Տանուտէր Գաբրիէլ Ղարիբեան	1	
Ծխատէր Մովսէս քահ. Մովսէսեանց	3	
Հասարակութիւն Քեալագեարխ գեղջ	5	
Հասարակութիւն Չիբուղչի գեղջ	4	
Գումար	28	20

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Ընութիւնք Հայրենեաց	—	20
Հովուական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Թրհանգ քերականութեան	—	25
Թրհանգ աւագ քահանայից	—	10
Թրհանգ վասն թեմական տեսչաց	—	10
Ձայն բազմաց	—	50
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ծամագրոց	4	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	2	—
Ձայնագրեալ շարական	60	
Հանապարհորդութիւն Հակոտհաուղէնի	—	80
Ճաշոց	60	—
Մաղմանք վասն Հայրապետի աղգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Յաւելուած Ծամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	20
Նոյն Գ. մասն	—	20
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	
Պատմութիւն ժողովոց Հայաստանեաց եկեղեցւոյ	—	20
Պատմութիւն Խաչակրաց	—	20
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	20
Պատմութիւն Հռոմոսի Վաճառ ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	—	50
Սաղմոս Դաւթի	—	50
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	20
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82.	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Միջնոց և Վանեցւոց	—	20
Օրացոյց (1890)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղչուելն կը լինի 20°/₀-ին ճանապարհածախքը գնողի վրայ)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց պատուիրի ամենից ուսուցչաց և ուսուցչուհեաց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Հայոց, զի որք ընդ իւրեանց դրագրութեանց իւրեանց յանուն Վեհափառ Հայրապետի չեն մատուցեալ զվկայականս ուսման իւրեանց յանցեալ ամի և կամ ստացեալ են յետոյ, ի գէպս կարևորութեան այնոցիկ զվաւերացեալ պատճէնս նոցին պահեսցեն առ ինքեանս, իսկ ղեկականան անշուշտ փութասցեն մատուցանել Նորին Սրբութեան ընդ ձեռն թեմական Առաջնորդաց ի 1 յառաջագայ յունիսի, նոյնպէս արասցեն և նորա, որք յայսմհետէ ցանկասցին ի ձեռս բերել զիրաւունս ուսուցչութեան եկեղեցական—ծխական ուսումնարանս Հայոց:

Մամուլի տակից դուրս եկաւ «Ձայնքարշ Շարականք» և Յուսիկ Վ. Մովսէսեանցի «Դասատետր Կրօնի» Ս. Բ. և Գ տարիները.

Յանկացողները կարող են դիմել Տպարանական ժողովին ի Ս. Էջմիածին. Въ Эчміадзинскій типографическій Комитетъ, въ Вагаршапатъ.

ԱՐԱՐԱՉ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Է. ՏԱՐԻ ԻԳ. ՅՈՒԼԻՍ 31

ՔՈՂԱՆԵԳԱՊՈՒԹԻՒՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ սրբալոյս Միւռոնի . 353
ԿՐՕՆԱԿԱՆ· ՔԱՆՔԱՐՆԵՐԻ առակը (Բերսիէ) . 354
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ· ԳԵՐԶԱՏԱՅԱԿԱՆ Գալափարները գիտութեան Հայեցակէտից, (Շարունակ. և վերջ) թարգմ. Բժ. Մ. Զարգարեանց . 366
ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ Նկատողութիւնք. (շարունակելի) Քաջբերունի . . 386
ԸՆԹԵՑԻՆ· ՏՕՆ կաթուղիկէ Ս. Էջմիածնի . 406
Տփխուս Հայուհեայ Բարեգործական ընկերութեան Հաշիւ . . . 407
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ Քաղաքաձք կանոնակաց Վեհափառ Հայրապետի ազգիս . . 407
ՔԱՂՈՒԱԾՔ յօրագրութեանց Սիւնեաց . 411
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Երևանի Թեմական Հոգաբարձութեան 412
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ և ծանուցումն ի վարչութենէ Ճեմարանի . . . 413
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲՐՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1890—ԻՅԼԻՍ

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Այրվանք կամ Վեղարդավանք·	— 10
Աստուածպաշտութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ . .	— 70
Արարատ Ամենագիր տարեկան ամիսղէ կազմեալ· . .	2 —
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ . . .	— 80
Բէնիամին Գրանկլինի կեանքը	— 20
Գիրք Հանդիսատարութեանց կայսերական տօնից . .	— 50
* Դոմոդոխա ողբերգութիւն	1 —
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի . . .	3 —
Դաշնագիր	— 10
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան . .	50
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց .	— 50
Նոյն.—Միջին դարուց	— 50
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ· Արէլ Եպիսկոպոսի .	— 10
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	— 10
Դպրոց տարեկան 1874—76	2 —
* Եօթն խօսք առ տղայս	— 20
* Թուաբանութիւն վարգացելոյ Ա. Գալֆայեան . .	1 —
* Ժամագիրք տեառն	8 —
Ժամագիրք ձեւաց	2 —
* Լսարան Աւագ ուրբաթ	— 10
* Լսարան Կ. Պոլսոյ	— 10
* » Արևմ	— 10
* » Ջատիկ տեառն	— 10
* » Երկինք և երկնայինք	— 10
* » Հոխիսիմէ	— 10
* » Հնութիւնք Եգիպտոսի	— 10
* » Մեծն Ներսէս	— 10
* » Ս. Խաչ	— 10
* » Տօն Ծննդեան	— 10
* Խանգարմունք Հայկաբանութեան	— 20
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ . . .	— 20
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի . . .	— 5
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի . . .	— 10
Կանոն ծխական Դպրոցաց	— 20
Հանգէս Դ. տարեդարձի Գէորգեան Ճեմարանի . .	— 10